# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

36ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 19 (1769) ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 21, 2016
VOLUME 36, NO. 19 (1769) SATURDAY, MAY 21, 2016

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## Օգտագործել Առիթը

Մայիս 16-ին Վիեննայի մէջ տեղի ունեցած Սարգսեան-Ալիեւ հանդիպման ընթացքին կողմերը որոշած են վերադառնալ 1994-1995 թուականներուն կնքուած զինադադարի համաձայնութիւններուն: Այս որոշումը գետնի վրայ գործադրութեան դրուելու պարագային, պատերազմական լայնածաւալ գործողութիւններու վերսկսման վտանգը առայժմ որոշ չափով կը նուազի: Յառաջիկայ օրերուն յայտնի կը դառնայ, եթէ Ալիեւի տուած խոստումը իրականութեան կը համապատասխանէ թէ ոչ:

Պատերազմական գործողութիւններու ընթացքին հայ զինուորներու արձանագրած սխրագործութիւնները վճռական դեր ունեցան կասեցնելու թշնամի բանակի յառաջխաղացքը: Միւս կողմէ սակայն պարզուեցաւ, որ մեծ թիւով զոհեր ունեցած ենք զինամթերքի եւ այլ տարրական առարկաներու բացակայութեան պատճառաւ:

Զինադադարի վերահաստատումը հայկական կողմին առիթ պիտի տայ, ապրիլեան քառօրեայ պատերազմի ընթացքին ի յայտ եկած թերութիւններէն դասեր քաղելու, հայկական բանակէն ներս բարեփոխումներ կատարելու եւ գոյութիւն ունեցող բազմաթիւ խնդիրներուն լուծումներ գտնելու ուղղութեամբ:

Արդիական զէնքեր ապահովելու հարցին հետ մէկտեղ, հայ հասարակութիւնը կը պահանջէ հիմնական լուծումներ գտնել կոռուպցիայի արատաւոր երեւոյթին, որ պատած է իշխող համակարգը բոլոր մակարդակներու վրայ: Իշխանութիւնները իրենք եւս կը խօսին այս մասին, սակայն գործնական քայլեր այդպէս ալ չեն առնուիր ու օլիկարխները կը շարունակեն կողոպտել պետական գանձը, որ այլապէս կրնար աւելի նպատակայարմար ձեւով օգտագործուիլ արդիական զէնքեր ապահովելու համար:

Այժմ հայաստանի իշխանութիւնները իրենց առջեւ ունին երկու ճանապարհ. ապահովագրուած զգալով նոր պատերազմի վտանգէն, վերադառնալ իրենց նախկին գործելաոճին եւ կամ զգալով պահի լրջութիւնը, դիմել գործնական քայլերու՝ երկրի դիմագրաւած տնտեսական տագնապները յաղթահարելու, բանակաշինութեան գործին լծուելու եւ իշխանութիւն-հասարակութիւն բեւեռացումը մեղմացնելու ուղղութեամբ:

Մեր մաղթանքն է որ, օգտագործելով առիթը, իշխանութիւնները կ'ընտրեն ճիշդ ճանապարհը, այլապէս երկին կը սպասեն դժուարին օրեր:

«ՄԱՍԻՍ»

# Սերժ Սարգսեան Բաւարարուած է Ալիեւի Հետ Հանդիպումի Արդիւնքներով

*Վիեննայի մէջ տեղի ունեցած Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներու հանդիպումէն ետք, Երեւան վերադառնալու ճամբուն, ինքնաթիռին մէջ, հայաստանեան հեռատեսիլի ընկերութիւններու լրագրողներուն հետ ունեցած հարցազրոյցի ընթացքին, Նախագահ Սերժ Սարգսեան յայտնեց, որ ինք առաջարկած է մինչեւ յաջորդ՝ Յունիսին նախատեսուած հանդիպումը հաստատել զինադադարի պահպանման ԵԱՀԿ-ի մնայուն դիտարկումը:*

*«Մենք չենք խօսել բանակցութիւնների մասին, իհարկէ խօսք եղել է, որ լաւ կը լինի, որ տեսանելի ապագայում հանդիպում լինի, բայց որեւէ պայմանների մասին չենք խօսել: Մենք խօսել ենք հրադադարի ռեժիմի պահպանման մասին, եւ ես ցանկութիւն եմ յայտնել, որ եթէ լինելու է հանդիպում, ապա լինի մոնիթորինկի հաստատումից յետոյ», - ըսած է Նախագահը:*

*Մայիս 16-ի Սերժ Սարգսեան-Իլհամ Ալիեւ հանդիպումէն յետոյ, Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Ճոն Քերրին, Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրովը եւ Ֆրանսայի եւրոպական հարցերով պետական քարտուղար Արլեմ Դեզիր յայտարարեցին, թէ հետագայ բռնութիւններու վտանգը նուազեցնելու համար նախագահները համաձայնած են կարելիութեան չափ կարճ ժամկէտներու մէջ վերջնականացնել ԵԱՀԿ-ի հետաքննական մեքանիզմը: Կողմերը համաձայնած են պահպանել հրադադարի ռեժիմը, որ հաստատուած էր 1994-1995 թուականներու համաձայնագրերով:*



Սարգսեան- Ալիեւ հանդիպումը Վիեննայի մէջ, Լաւրովի եւ Քերիի մասնակցութեամբ

*«Պայմանաւորուածութիւն ձեռք ձգուած է զինադադարի պահպանման եւ կրակի դադրեցման մասին այն տեսքով, ինչ տեսքով այն ամրագրուած է նախորդ 94-95 թուականներու համաձայնագրերով: Պայմանաւորուած ենք նաեւ այն մասին, որ ԵԱՀԿ-ն կը ձեւակերպէ յստակ քայլեր, որոնք թոյլ կու տան հետաքննել միջադէպերը շփման գիծի վրայ, այն մասին, որ ԵԱՀԿ-ն նաեւ կ'օգնէ լուծել անյայտ կորուածներու հարցերը եւ այն մասին, որ Յունիսին Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահները կը համաձայնեցնեն իրենց յաջորդ հանդիպման օրը եւ*

*Շար.ը էջ 5*

## Գերմանիոյ Խորհրդարանէն Ներս Քուէարկութեան Պիտի Դրուի Հայոց Ցեղասպանութեան Ճանաչման Բանաձեւը

*Յունիս 2-ին Գերմանիոյ խորհրդարանի երկու պալատներէն մէկը՝ Պունտեսթակը, մտադիր է քուէարկութեան դնել Հայոց Ցեղասպանութեան ճանաչման բանաձեւը:*

*«Ֆայնանշըլ Թայմզ» թերթի փոխանցմամբ, այդ հանգամանքը ամենայն հաւանականութեամբ կը յառաջացնէ Թուրքիոյ նախագահ Ռեճէփ Էրտողանի զայրոյթը:*

*Թերթը կը գրէ որ, Պունտեսթակը բաւական ժամանակէ ի վեր կը քննարկէ Հայոց Ցեղասպանութիւնը ճանչնալու բանաձեւը: Անցեալ տարուայ Ապրիլին, երբ աշխարհը նշեց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցը, Խորհրդարանէն ներս տեղի ունեցաւ սուր քննարկում, սակայն Վարչապետ Անժելա Մերկելի կառավարութիւնը համոզեց կանանցներու կու-*

*Շար.ը էջ 5*

## Արցախի Ի Նպաստ Թելեթոնի Ընթացքին Հանգանակուեցաւ Մէկ Միլիոն Տոլար




Թելեթոնի աւարտին կը յայտարարուի հանգանակութեան արդիւնքը

*Շաբաթ, Մայիս 14-ին Լոս Անճելըսի մէջ տեղի ունեցաւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի յատուկ թելեթոնը:*

*Վեց ժամ տեւած հանգանակութեան ընթացքին Արցախի օգնութեան համար հաւաքուեցաւ 1.1 միլիոն տոլար:*

*Թելեթոնի անձամբ ներկայ եղաւ Արցախի Թեմի առաջնորդ Պարգեւ Արք. Մարտիրոսեանը: Հայկական տեղական վեց հեռատեսիլի կայաններով սփռուող հաղորդումի ընթացքին ելոյթներով ու կոչերով հանդէս եկան Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Բակօ Սահակեանը, Հիմնադրամի ղեկավարները, ազգային կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, Ամերիկացի քաղաքական դէմքեր եւ ուրիշներ:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Դա Կը Լինի Վերջին Եւ Ճակատագրական Բացթողումը

ԱՐԱՄ ԱՄԱՏՈՒՆԻ

«Դասեր քաղել պատմութիւնից»: Մեզանից շատերը իրենց կեանքի ընթացքում պարբերաբար լսում եւ կիրառում են այդ արտայայտութիւնը: Դրա իմաստը երեւի թէ չունի յաւելեալ բացատրութիւնների կարիք: Պարտութիւնն ունենում է պատճառներ, որոնք յանգեցնում են դրան, թերացումներ, բացթողումներ եւ այլն: Առանց պարտութեան դրանք նկատելը շատ դժուար է:

Ընդ որում՝ խօսքը միայն ռազմական պարտութեան մասին չէ: Վերջին հաշուով, դպրոցում չպատասխանած դասն էլ ինչ-որ իմաստով պարտութիւն է, որից պէտք է դաս քաղել եւ յաջորդ անգամ պատասխանել աւելի լաւ: Բացթողումները, թերացումները, վրիպումները առաւել եւս դժուար է նկատել յաղթանակի դէպքում: Սա մեզանում շատ քիչ քննարկուած թեմա է, իսկ «դասեր քաղել յաղթանակից» արտայայտութիւնը կարծէք թէ ընդհանրապէս «կուսական» է, եւ շատերի ականջին կարող է հնչել նոյնիսկ տարօրինակ: Բայց իտէալական վիճակներ չկան, եւ յաղթողը ուժեղ լինելով, այդուհանդերձ, միշտ հեռու է կատարելութիւնից, առաւել եւս, երբ քո յաղթանակում զգալի է նաեւ հակառակորդի, մրցակցի սխալների եւ վրիպումների բաժինը: Յաղթանակը նաեւ դրա ամբողջութիւնն է, հետեւաբար՝ յաղթանակն ու կատարելութիւնը բոլորովին հոմանիշներ չեն:

Եւ այդ իմաստով, յաղթանակը նոյնքան կարիք ունի դասեր քաղելու, որքան պարտութիւնը: Աւելին՝ պարտութիւնից հարկադրուած չեն լինում դաս քաղել այն ժողովուրդները, որոնք կարողանում են դասեր քաղել սեփական յաղթանակից: Դրան յաջորդում են միմիայն նորանոր յաղթանակներ, որոնք դառնում են ոչ միայն տարբեր բնագաւառներում տուեալ ժողովրդի ուժի, մրցունակութեան, մարտունակութեան, կենսունակութեան դրսեւորում, այլ նաեւ նոր ուժի աղբիւր:

Այդ իմաստով Շուշիի Յաղթանակը հայ ժողովրդի համար եզակի մեկնակէտ էր երկար ժամանակաշրջանի՝ հարիւրամեակների պարտութիւններից յետոյ: Դա ոչ միայն յաջողութիւն էր ինքնին, պատմութեան բեկում էր ինքնին, որը նաեւ պարտութիւնից դաս քաղելու արդիւնք էր, քանի որ հայ ժողովուրդը իր յաջողութեան յոյսը դնելով միմիայն իր վրայ՝ կատարեց միջազգային մակարդակի պատմական նշանակութեան քայլ, այլեւ հանդիսանում էր յետագայում արդէն միայն սեփական յաղթանակների վրայ դաս կառուցելու, հետեւաբար նորանոր յաղթանակների հենք:

Բայց անցնող երկու եւ կէս տասնամեակը ցոյց տուեց, որ մենք աւելի շատ թաքնուեցինք յաղթանակի հետեւում, քան դասեր քաղեցինք դրանից, եզրակացրինք, թէ ինչ պէտք է անել շարունակութեան համար, յաղթանակը պահպանելու, շարունակելու, յաղթանակը ըստ էութեան որբ չթողնելու համար: Դա լինելու էր հայկական պետականութեան ամրացումը: Այդ մասին շատ է խօսուել, դեռ կը խօսուի շատ:

Ապրիլեան քառօրեայ պատերազմը Շուշիի յաղթանակից քսանչորս տարի անց մեր աչքերը բացեց մեր բացթողումների վրայ, եւ միայն Հայաստանի զինուած ուժերի, անկախութեան սերնդի հերոսական ջանքով է, որ մենք նորից ստիպուած չենք լինելու դասեր քաղել պարտութիւնից, թէեւ շատ մօտ էինք դրան: Ըստ էութեան, քառօրեայ պատերազմը ցոյց տուեց, որ մենք պարտուել ենք՝ պարտուել է պետականաշինութիւնը, պարզապէս հայկական զինուժի զինուորն ու սպան թոյլ չտուեցին, որ այդ պարտութիւնը հասանելի լինի հակառակորդին, տուեցին մեզ երկրորդ հնարաւորութիւնը:

Այս անգամ մենք իրաւունք չունենք թաքնուել յաղթանակի թիկունքում, ինչքան էլ մեծ է դայթակղութիւնը, ինչքան էլ մեծ է պատեհապաշտների, երեսպաշտների քանակը, որոնք ներկայումս լծուել են յաղթանակը կրկին պետական յանցագործութիւնների ապաստարան դարձնելու գործին: Երկրորդ հնարաւորութիւնը բաց թողնելու, այս անգամ գոնէ յաղթանակի հետ այդպէս վարուել թոյլ չտալու հնարաւորութիւնը բաց թողնելու դէպքում մենք կը վճարենք շատ թանկ: Այս մասին էլ խօսւում է շատ, արժեզրկուելու աստիճան: Մինչդեռ մենք ունենք ոչ թէ խօսքի, այլ գործի կարիք, չափանիշների եւ չափորոշիչների մշակման կարիք, մենք ունենք յաղթանակի պահանջները ձեւակերպելու կարիք:

Շուշիի յաղթանակից յետոյ, օրինակ, այդ պահանջները չեն ձեւակերպուել: Այդ խնդրին էլ գործնականում չի դարձուել որեւէ ուշադրութիւն: Նոյն վիճակն է հասունանում այժմ: Մենք կանգնում ենք քառօրեայ պատերազմի յաղթանակի պահանջը ձեւակերպելու խնդրի առջեւ: Պաթոսն ու կենացները մթնոլորտը լցնում են հենց այն դատարկութեան պատճառով, որ անխուսափելիօրէն առաջանում է յաղթանակի պահանջի ձեւակերպման բացակայութեան հետեւանքով:

Յաղթանակը մեր պահանջն է՝ որպէս պետութիւն, որպէս հասարակութիւն, որպէս ժողովուրդ: Այդպէս է բոլոր յաղթանակների դէպքում, բոլոր ժողովուրդների դէպքում: Բայց յաղթանակն ինքն էլ ունի պահանջներ, որ բնագաւառում եւ ինչ հարցում էլ, որ այդ յաղթանակը չլինի: Պէտք է արձանագրել, որ Շուշիի յաղթանակը մնաց առանց հանրային աջակցութեան, հանրութիւնը չձեւակերպեց այդ յաղթանակի պահանջը, տէր չկանգնեց այդ յաղթանակին, թոյլ տուեց, որ իշխանական «էլիտաները» այդ յաղթանակից վերցնեն ամէն ինչ՝ հանրութեանն ու պետութեանը թողնելով միայն օրացոյցի կարմիր օրը:

Քառօրեայ պատերազմը, փաստացի շարունակուող պատերազմական վիճակը չի կարելի արժանացնել առաջին յաղթանակի ճակատագրին: Հանրութիւնը պէտք է ստանձնի պատասխանատուութիւն այդ յաղթանակի համար, այդ յաղթանակի պահանջը իրականացնելու եւ պետական կեանքի բոլոր ոլորտներում կենսական փոփոխութիւնների առարկայական մեկնարկի համնելու համար՝ այդպիսով վերադարձնելով նաեւ Շուշիի յաղթանակի ռեսուրսային ամբողջութիւնը: Ներկայիս իրավիճակը չպէտք է թողնել «էլիտաներին»: Դա կը լինի վերջին եւ ճակատագրական բացթողումը, որ թոյլ կը տայ հասարակութիւնը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

# Համակարգը Փլւում է. Օլիգարխները Փորձում են Փրկել Ինչ Հնարաւոր է

ՆԱՅԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Հայաստանում կոռուպցիայի դէմ պայքարի տեսանելի արդիւնքների բացակայութեան դէպքում Եւրամիութիւնը չի տրամադրի նախատեսուած 15 միլիոն եւրոն: Այս մասին յայտարարել է Հայաստանում Եւրամիութեան պատուիրակութեան ղեկավար Պիոտր Սվիտալսկին «Կառավարութիւն - քաղաքացիական հասարակութիւն» հակակոռուպցիոն համաժողովի ժամանակ:

Հայաստանի կառավարութիւնը, յիշեցրել է նա, մի քանի շատ կարեւոր փաստաթուղթ է ստորագրել, ստեղծել է Հակակոռուպցիոն խորհուրդ: Եւրամիութիւնը, նրա խօսքով, 15 միլիոն եւրօ է յատկացրել այդ պայքարի շրջանակում: «Սակայն այդ գումարը դեռ չի բաշխուել ու ծախսուել»:

Նա անհրաժեշտ է համարել անկախ, ուժեղ կառոյցի ստեղծումը, որը կը պայքարի կոռուպցիայի դէմ:

Մայիսի 12-ին կառավարութեան նիստի ժամանակ վարչապետ Յովիկ Աբրահամեանը, որը նաեւ գլխաւորում է մէկ տարի առաջ ստեղծուած Հակակոռուպցիոն յանձնաժողովը, յայտարարել է նոր տնտեսական կուրսի մասին՝ կոռուպցիայի դէմ պայքարն անբաւարար համարելով: Նա կոչ է արել սոցիոլոգիական հարցումներ անել՝ պարզելու, թէ հասարակութիւնում պաշտօնեաներից ում են կոռումպացուած համարում: Յովիկ Աբրահամեանը, սակայն, յատուկ մարմին ստեղծելու մասին չի յայտարարել:

Եւրամիութիւնը փաստացի յայտարարում է, որ եթէ տեսանելի արդիւնքներ չլինեն, Հայաստանը 15 միլիոն եւրոն չի ստանայ: Պէտք է ենթադրել, որ նոյնը, սակայն առայժմ ոչ բաց ասում են նաեւ միջազգային կառոյցների ներկայացուցիչները, որոնց Հայաստանն իր պիւտճէից աւելի մեծ գումար է պարտք: Արտաքին պարտքը կոշտ պարտաւորութիւն է, եւ երեւի եկել է հատուցման ժամը:

Յովիկ Աբրահամեանի վարչապետութեան ժամանակ Հայաստանի կառավարութիւնը պարտքն աննախադէպ ծաւալների է հասցրել: Միայն վերջին 6 ամիսներին մօտ 1 միլիարդ տոլարի պարտք է կուտակուել: Ընդ որում, երկար տարիներ պարտքը չէր գերազանցում 3 միլիարդ դոլարը: Վերջին երեք տարիներին Հայաստանի կառավարութիւնը, փաստօրէն, սոցիալական պարտաւորութիւնները կատարել է արտաքին պարտքի հաշուին, իսկ երկրում ստեղծուած բարիքները բաշխուել են կոռուպցիոն ճանապարհներով կամ էլ դուրս բերուել երկրից:

Կառավարութեան վրայ ճնշումն աճում է երկրաչափական պրոգրեսիայով, ընդ որում, թէ ներքեւից, թէ վերեւից: Յովիկ Աբրահամեանը կարողացել է 3 շաբաթ շահել, սակայն այդ ժամկէտը թերեւս օգտագործուելու է ոչ թէ կոռուպցիայի դէմ պայքարի, այլ փրկելու համար այն, ինչ հնարաւոր է:

Հայաստանի օլիգարխիկ համակարգը երկար տարիներ կառուցուել է սոցիալական պարտաւորութիւններն աշխատանքային արտագաղթի խթանման եւ տրանսֆերտների ստացման, ինչպէս նաեւ արտաքին պարտքի աւելացման հաշուին կատարելու վրայ: Օլիգարխիան էլ հարստութիւն է կուտակել՝ միջոցներ չներդնելով երկրում եւ կապիտալը դուրս տանելով: Սակայն տրանսֆերտները կրճատուել են, նոր պարտք չեն տալիս:

Օլիգարխները ստիպուած են լինելու միայնակ փրկուել, որովհետեւ համակարգը փլւում է: Հիմա ամէն մէկը մտածում է, թէ ինչպէս փրկի ունեցածը եւ չդառնայ քաւութեան նոխազ:

«ԼՐԱԳԻՐ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը


ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՅԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# «Հայաստանը Կոռուպցիայի Պատճառով Կարող Է Կորցնել Պետականութիւնը»

*Հայաստանում կոռուպցիան այնպիսի մակարդակի վրայ է, որ ռեսուրսներ չունենալու պայմաններում իրականում լուրջ մարտահրաւէր է դարձել, որը կարող է հանգեցնել պետականութեան կորուստի: Այս մասին ասել է Transparency International հակակոռուպցիոն կենտրոնի ղեկավար Վարուժան Օկտանեանը «Կառավարութիւն- քաղաքացիական հասարակութիւն» հակակոռուպցիոն համաժողովի շրջանակում լրագրողների հետ զրոյցում:*

*Անդրադառնալով վարչապետ Յովիկ Աբրահամեանի յայտարարութեանը կոռուպցիայի դէմ պայքարի մասին, նա նշեց, որ վարչապետի ելոյթը երկակի տպաւորութիւն է թողել: «Մի կողմից, ըստ երեւոյթին կայ այն գիտակցումը, որ եթէ այսպէս շարունակուի, մենք կարող ենք կորցնել մեր պետականութիւնը, ու ապրիլեան պատերազմը ցոյց տուեց դա: Միաժամանակ ես չհասկացայ, թէ որն էր այդ մասին յայտարարելու անհրաժեշտութիւնը: Այդ ամենը մի տեսակ ցուցադրական տպաւորութիւն թողեց»,- նշեց Օկտանեանը: Նա մտահոգութիւն յայտնեց, որ այս յայտարարութիւնները նորից թղթի վրայ կը մնան : «Սա շատ դժուար քայլ է այն տեսակէտից, որ այս հարցում լրջագոյն քաղաքական կամք է պէտք»,- յաւելեց ՀԿ-ի ղեկավարը :*

*Անդրադառնալով միւս երկրների փորձին՝ նա նկատեց, որ որոշ երկրներում որոշակի պահի սկսել են գիտակցել, որ այդպէս շարունակել չի կարելի ու կոռուպցիայի այդ նոյն կնքահայրերը սկսել են իրականացնել համապատասխան փոփոխութիւններ «Ես առաջնորդւում եմ որոշակի քայլերով ու չեմ տեսնում այդ քայլերը: Ես միշտ նշել եմ, որ Հայաստանի դէպքում կոռուպցիայի հիմքում, արմատներում մենաշնորհներն են, որոնցից էլ բխում է նաեւ քաղաքական դաշտի մոնոպոլիզացիան: Սա քաղաքական ու բիզնես վերնախաւերի միաձուլում է ու իշխանութեան տարբեր ճիւղերի միջեւ հաւասարակշռութեան բացակայութիւն»,- նկատեց Վարուժան Օկտանեանը՝ յաւելելով, որ մեծ յոյսեր չի կապում վարչապետի յայտարարութեան հետ:*

# «Հայաստանում Արդար Իշխանութիւն Հնարաւոր Է Հաստատել Միայն Փողոցում»



«Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահ Արմէն Մարտիրոսեան

*Հայաստանի իշխանութիւնները ոչ մի կերպ չեն ուզում հրաժարուել ընտրութիւններում ֆանտոմային ձայներից: Այս մասին յայտնել է «Ժառանգութիւն» կուսակցութեան կառավարման փոխնախագահ Արմէն Մարտիրոսեանը Ընտրական օրէնսգրքի վերաբերեալ ԵԱՀԿ ներկայացուցչութեան կազմակերպած քննարկումների ժամանակ:*

*Ընդդիմադրի խօսքով՝ ինքը զարմացած էր ԸՕ նախագծի վերաբերեալ Վենետիկի յանձնաժողովի եզրակացութիւնից, որում եւրոպացի փորձագէտները նորմալ են համարել քուէարկածների պաշտօնական ցուցակների հրապարակման արգելքը: «Քուէարկածների անունները գաղտնի պահելու կառավարութեան ցանկութիւնը ողջամիտ արդարացում չունի: Մենք խսլամական պետութիւն չենք: Հայաստանում բոլորը դէմքերը բաց են գնում քուէարկութեան: Ընտրատեղամաս տանող թունելներ չկան, որպէսզի մարդիկ չտեսնեն, թէ ով է գնում քուէարկութեան: Այդ դէպքում ինչու՞ թաքցնել քուէարկածների ցուցակները: Դա պէտք է, որպէսզի իշխանութիւնները նկարեն դատարկուած շրջանների 600-700 հազար ձայները»,- ընդգծել է Մարտիրոսեանը:*

*Նրա խօսքով՝ այդ ամենից յետոյ անկախ կամ ոչ անկախ դատարաններում բողոքարկելուց բացի, ոչ մի ելք չի մնում ընտրութիւնները: Այդ ամէնը եւս մէկ անգամ ապացուցում է, որ Հայաստանում արդար իշխանութիւն հնարաւոր է հաստատել միայն փողոցի շնորհիւ:*

# Իշխանութիւնն Ու Ընդդիմութիւնը Չեն Բացառում Բանակցութիւնների Վերսկսումը

*Ազգային ժողովի պետաիրաւական հարցերի մշտական յանձնաժողովի նախագահ Յովհաննէս Սահակեանն «Ազատութեան» հետ զրոյցում չբացառեց ընդդիմութեան հետ ընտրական օրէնքի շուրջ փոխհամաձայնութեան գալու հնարաւորութիւնն անգամ օրէնքի ընդունումից յետոյ.- «Չեմ բացառում, հաշուի առնելով նաեւ, որ Ընտրական օրէնսգիրքը բարդ է եւ լայնածաւալ է, նաեւ եղել են առաջարկութիւններ, որոնք հիմնական զեկուցողը կամ հեղինակը չի հասցրել դեռեւս ուսումնասիրի, որպէսզի նաեւ իրացուի, ես չեմ բացառում, որ արտահերթ ընթացակարգով երրորդ ընթերցումը մենք քննարկենք»:*

*Թէեւ ընդդիմութիւնն ու քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչները յայտարարում են, որ իշխանութեան հետ 4+4+4 ձեւաչափով քննարկումներն արդիւնք չտուեցին, իշխող քաղաքական ուժի ներկայացուցիչը պնդում է, թէ փոխհամաձայնութիւն եղել է, եւ նրանց առաջարկներից շատերն են տեղ գտել օրէնքի նախագծում. - «Իմ կարծիքով, այո: Որովհետեւ այն քննարկումները, այն մօտեցումները, որոնք մենք կարողացել ենք իրացնել, ես կարծում եմ, մեծ մասամբ ստացուեց: Հաշուի առնելով նաեւ, որ քննարկումները շարունակւում են, նաեւ այն, որ մենք պատրաստ ենք հետագայում նոյնպէս քննարկել դա՝ եթէ անհրաժեշտութիւն լինի, եւ գանք կոնսենսուսի, գանք աւելի լայն ընդհանրութիւնների, մենք հնարաւորութիւն ունենք դա իրացնելու Ընտրական օրէնսգրքի մէջ՝ լրացումներ կամ փոփոխութիւններ առաջարկելով»:*

*Ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէս խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը, մինչդեռ, հակառակ տեսակէտն է պնդում՝ իրենց միասնական 5 առաջարկները չեն ընդունուել. - «Ոչ ոք չի կարող այդ ձայները, այդ «մեծամասնութեան» քուէարկութիւնը հռչակել որպէս լայն կոնսենսուս: Իրականում բոլորն էլ շատ լաւ հասկանում են, թէ այդ ձայները ինչպէս են ձեռք բերուել, բոլորը շատ լաւ հասկանում են, որ Հայաստանում, բացի իշխող կոալիցիայից, ոչ մի քաղաքական ուժ իր համաձայնութիւնը այս Ընտրական օրէնսգրքին չի տուել»:*

*Զուրաբեանը, սակայն, նոյնպէս չի բացառում 4+4+4 ձեւաչափով բանակցութիւնների վերսկսումըդ - «Ո՛չ երաշխիք եմ տալիս, ո՛չ ինչ-որ մէկին ուզում եմ յուսադրել: Ես ընդամէնը ասում եմ, որ իշխանութիւններն էլ են հրապարակային հաւաստիացումներ տալիս, որ իրենք պատրաստ են շարունակել կոնսենսուսի բանակցութիւնները, մենք էլ: Իսկ դա նշանակում է, որ շատ հնարաւոր է, որ ինչ-որ պահից մենք վերսկսենք 4+4+4 ֆորմատով բանակցութիւնները եւ ի վերջոյ փորձենք գալ կոնսենսուսի»:*

*Ընդդիմադիր «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Զարուհի Փոստանջեանը էական չի համարում իշխանութեան եւ ընդդիմութեան միջեւ այս հարցով բանակցութիւնների վերսկսումը՝ համոզուած լինելով, որ այս անգամ եւս իշխող Հանրապետականը իրեն յարմար փաստաթուղթ կ'ունենայ:*

*Նախագծին առաջին եւ երկրորդ ընթերցումների ժամանակ դէմ քուէարկած Փոստանջեանը ապասելի էր համարում իշխանութեան ձեռագիրը. - «Դե իրենք փորձում են դա մատուցել: Իհարկէ, դա այդպէս է, բայց դա դեռ չի նշանակում, որ կայ կոնսենսուս եւ այդ փաստաթուղթը ընդունելի է բոլորի համար: Ընդհակառակը՝ փաստաթուղթը մերժուած է գրեթէ բոլորի կողմից: Իրենք են այդ փաստաթղթի հեղինակները, եւ այդ փաստաթուղթ միայն իրենց համար է: Իրենցից տրամադրուածութիւն եւ դրական առաջարկ, իհարկէ, մենք չենք սպասում»:*

# «Ընդդիմութիւնը Իր Ապագայ Պարտութիւնները Ուրիշի Վրայ Բարդելու Ուղիներ Է Փնտռում»

*Ընդդիմութիւնը կարծես թէ իր ապագայ պարտութիւնները ուրիշի վրայ բարդելու ուղիներ է փնտռում: Այս մասին ԱԺ-ում Ընտրական օրէնսգրքի 2-րդ ընթերցման քննարկումների ժամանակ, յայտնել է ԱԺ փոխխօսնակ Հերմինէ Նաղդալեանը:*

*Նա նշել է, որ անգամ խորհրդարանի հնաբնակները նման ինտենսիւ քննարկումներ չեն յիշում, երբ 1-ին եւ 2-րդ ընթերցումների միջեւ մօտ 260 առաջարկ ստացուեր: Դրանք բոլորը քննարկել են, իսկ մեծ մասը՝ ընդունել:*

*Այդուհանդերձ ընդդիմութիւնը նորից քննարկումներին անտեղի ագրեսիայով է մօտենում:*

*«Մեր ընդդիմադիր գործընկերները ասես թէ հիմք են ստեղծում, որպէսզի ստուեր նետեն արուած աշխատանքի վրայ եւ իրենց պարտութեան պատճառներն ուրիշների մէջ փնտռեն»,- եզրափակել է Նաղդալեանը:*

# Հայաստանի Պետական Պարտքը Ապրիլի 30-ի Դրութեամբ Կազմում Է 5 Մլրդ 252 մլն Տոլար.

*Հայաստանի պետական պարտքը Ապրիլի 30-ի դրութեամբ կազմում է 5 մլրդ 252 մլն տոլար: Այս մասին յայտնել է տնտեսագէտ, ՀԱԿ անդամ Վահագն Խաչատրեանը:*

*Նրա խօսքով՝ դրանից մօտ 350-3650 մլն դոլարը ծախսւում է պետական պարտքի սպասարկման համար: ՀՀ Ֆիննախի պաշտօնական կայքում մակրոտնտեսական ցուցանիշների համաձայն՝ երկրի ՀՆԱ-ն կազմում է 10.5 մլրդ տոլար: «ՀՆԱ մօտ 20-20 տոկոսը մենք ստանում ենք տրանսֆերտների տեսքով»,- նշեց տնտեսագէտ: Հայաստանի ներքին պարտքը, Վահագն Խաչատրեանի խօսքով, կազմում է 793 մլն տոլար:*

*Վահագն Խաչատրեանը՝ անդրադառնալով Հայաստանում ԵՄ պատուիրակութեան ղեկավար Պյոտր Սվիտալսկու յայտարարութեանն այն մասին, որ կոռուպցիայի դէմ պայքարում տեսանելի արդիւնքների բացակայութեան դէպքում Բրիւսելը Երեւանին չի յատկացնի նախատեսուած 15 մլն եւրոն:*

*«Երկար տարիներ Հայաստանին լուրջ գումարներ են յատկացուել կոռուպցիայի դէմ պայքարի համար: Բայց եթէ առաջ կոռուպցիան մեր երկրում տեղային կամ լոկալ բնոյթի էր, ապա հիմա այն համակարգային է դարձել»,- յաւելել է Վահագն Խաչատրեանը:*

# Սերժ Սարգսեանն Ասել է, Որ Ուզում Է Փոխել Կառավարութիւնը

*«Ժողովուրդը» գրում է. «Առաջին հայացքից կարող է թուալ, որ ՀՀ գործող վարչապետը նախորդներից հետ չմնալու համար է «ռեֆորմատոր» ձեւանում, սակայն իրականութիւնն այլ է: Իշխանական կուլիսներում շրջանառուող լուրերի համաձայն՝ Սերժ Սարգսեանը իշխանութեան վերնախաւին տեղեկացրել է, որ պատրաստւում է փոխել կառավարութիւնը, քանի որ հին դէմքերից ազատուելու հանրային պահանջը գնալով ուժգնանում է: Յովիկ Աբրահամեանն էլ որոշել է յարձակման անցնել եւ «ռեֆորմատորի» կերպարով հանդէս գալ՝ ցոյց տալով, որ իրեն փոխելն այնքան էլ ճիշդ չէ:*

*Ի վերջոյ, սիրուն չի լինի պաշտօնանկ անել մի պաշտօնեայի, որը յայտարարում է կոռուպցիայի դէմ պայքար սկսելու մասին: Բայց միւս կողմից՝ Յովիկ Աբրահամեանը բոլոր նախադրեալները ստեղծել է, որպէսզի Սերժ Սարգսեանը կառավարութեան անդամներին, իրենից բացի, պաշտօնանկ անի: Ինչպէս ասում են՝ հետաքրքիր ժամանակներ ենք ապրում»:*

## ԼՈՒՐԵՐ

# «Հռոմի Պապի Այցը Ծիծեռնակաբերդ Կ'ազդի Անգարայի Հետ Յարաբերութիւնների Վրայ»


Հռոմի Ֆրանցիսկոս Պապը

*Հռոմի Պապի այցը Ծիծեռնակաբերդի յուշահամալիր կարող է լարուած դարձնել Վատիկանի եւ Թուրքիայի միջեւ դիւանագիտական յարաբերութիւնները: Այս մասին գրում է «religionnews.com»-ի թղթակից Ռոզի Սքեմել:*

*Հեղինակը յիշեցնում է, որ Վատիկանը հրապարակել է Հռոմի Պապ Ֆրանցիսկոսի գրաֆիկը Հայաստան կատարելի այցի ընթացքում: Նրա խօսքով, Հայաստան այցելութիւնը շատ կարեւոր է, յատկապէս այն բանից յետոյ, երբ պոնտիֆիկը 1915 թուականի իրադարձութիւնները կոչեց 20-րդ դարի առաջին ցեղասպանութիւն:*

*Հռոմի Պապի այցը Ծիծեռնակաբերդի յուշահամալիր կարող է էլ աւելի լարել դիւանագիտական յարաբերութիւններն Անգարայի եւ Վատիկանի միջեւ եւ սպասւում է, որ կը լինի նրա՝ Հայաստան այցի գլխաւոր իրադարձութիւնը:*

*Հռոմի Սրբազան քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի Հայաստանի այցը կը մեկնարկի Յունիսի 24-ին: Այցի շրջանակներում Երեւանի «Զուարթնոց» միջազգային օդանաւակայանում տեղի կ'ունենայ պաշտօնական դիմաւորման արարողութիւն, որից յետոյ Սրբազան Քահանայապետը կը մեկնի Մայր Աթոռ Ս. Էջմիածին. Մայր Տաճարում տեղի կունենայ Բարիգալստեան՝ «Հրաշափառի» արարողութիւնը:*

*Նոյն օրը երեկոյան Սրբազան Քահանայապետը Հայաստանի Հանրապետութեան Նախագահի նստավայրում հանդիպում կ'ունենայ Նախագահ Սերժ Սարգսեանի, ապա՝ ՀՀ իշխանութիւնների, հասարակութեան եւ դիւանագիտական կորպուսի ներկայացուցիչների հետ: Այցի առաջին օրը կ'ամփոփուի Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կայանալիք Ֆրանցիսկոս Պապի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիպմամբ:*

*Յունիսի 25-ի առաւօտեան Սրբազան Քահանայապետը կայցելի Ծիծեռնակաբերդ՝ Հայոց ցեղասպանութեան զոհերի յուշահամալիր եւ թանգարան: Հռոմի Պապ Ֆրանցիսկոսն այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ կը մեկնի Գիւմրի, որտեղ Սուրբ եւ Անմահ Պատարագ կը մատուցուի Վարդանանց հրապարակում: Գիւմրիում Հռոմի Պապը նաեւ կ'այցելի Անարատ Յղութեան Հայ քոյրերի միաբանութեան «Տիրամայր Հայաստանի» կուսաստան, Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդանիստ Յոթ Վէրք Ս. Աստուածածին եկեղեցի եւ Սրբոց Նահատակաց հայ կաթողիկէ Մայր Տաճար: Նոյն օրը երեկոյեան Երեւանում՝ Հանրապետութեան հրապարակում, տեղի կ'ունենայ էկումենիկ արարողութիւն եւ Խաղաղութեան Աղօթք:*

*Յունիսի 26-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Հռոմի Սրբազան Քահանայապետը հանդիպում կ'ունենայ Հայ Կաթողիկէ եպիսկոպոսների հետ, կը մասնակցի Ս. Պատարագի արարողութեանը եւ էկումենիկ ճաշկերոյթի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու արքեպիսկոպոսների եւ եպիսկոպոսների, Հայ Կաթողիկէ արքեպիսկոպոսների եւ եպիսկոպոսների ու պապական պատուիրակութեան հետ: Ապա Ֆրանցիսկոս Պապը հանդիպում կունենայ Հայ Եկեղեցու պատուիրակների եւ բարերարների հետ:*

*Նոյն օրը Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս պապը Երեւանից կը մեկնի Հռոմ:*

# Նալբանդեան. «Կարգաւորումը Պէտք Է Լինի Փաթեթային՝ Փուլային Իրականացմամբ»

*Լաւրովի փաստաթուղթ, առաջարկութիւններ գոյութիւն չունեն, «Ինտերֆաքս»-ի հետ զրոյցում յայտարարել է Հայաստանի արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանը՝ մեկնաբանելով Ռուսաստանի արտգործնախարարի յայտարարութիւնները ղարաբաղեան հակամարտութեան փուլային կարգաւորման առաջարկութիւնների վերաբերեալ:*


Հայաստանի արտգործնախարար Էդուարդ Նալբանդեան

*Մայիսի 16-ին Վիեննայում կայացած Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահների հանդիպմանը յաջորդած ճեպազրոյցում Սերգէյ Լաւրովը, մասնաւորապէս, ասել էր. - «Թերեւս, հաշուի առնելով կողմերի միջեւ իրավիճակի լարուածութիւնը, հարկ կը լինի դա անել փուլ առ փուլ: Եւ կարգաւորման առաջին փուլի համաձայնեցման հնարաւորութիւնները կան, դրանք ձեւակերպուել են Ռուսաստանի միջնորդութեամբ, որը գործել է համանախագահների ընդհանուր մօտեցումների շրջանակներում եւ ստացել է մեր ֆրանսիացի եւ ամերիկացի գործընկերների աջակցութիւնը: Մենք հիմքեր ունենք կարծելու, որ հայկական եւ ատրպէյճանական կողմերը տրամադրուած կը լինեն ձեւակերպելու փոխզիջումը, իսկ մենք ամէն կերպ կ'աջակցենք դրան»:*

*«Իմ ռուս գործընկերը բազմիցս անձամբ պարզաբանել է, որ Լաւրովի փաստաթուղթ, առաջարկութիւններ գոյութիւն չունեն: Նա բազմիցս ընդգծել է, որ կարծիքների փոխանակում է իրականացւում, մտքեր են արտայայտւում՝ գաղափարների ձեւաւորման, լուծումների որոնման նպատակով», -ՀՀ արտաքին գործերի նախարարութեան մամուլի, տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապի վարչութեան տարածած հաղորդագրութեան համաձայն, պատասխանելով «Ինտերֆաքս»-ի հարցին, նշել է Նալբանդեանը՝ շարունակելով. - «Որեւէ կասկած չկայ, որ վերջին տարիներին բանակցային գործընթացի բոլոր փուլերում, ներառեալ մտքերի փոխանակման փուլում, մօտեցումը եղել եւ շարունակում է մնալ նոյնը, եւ դրա մասին բազմիցս ասել ենք, դրա մասին նշել են նաեւ համանախագահները, այդ թւում՝ նաեւ Լաւրովը. կարգաւորումը պետք է լինի փաթեթային՝ փուլային իրականացմամբ»:*

*«Ինտերֆաքս»-ի խնդրանքով գնահատելով, թէ որքանո՞վ է իրատեսական, որ Վիեննայի նշուած պայմանաւորուածութիւնները կեանքի կը կոչուեն, Հայաստանի արտգործնախարարը, մասնաւորապէս, ասել է. - «Այն, որ համանախագահ երկրների նախարարներն առաջին անգամ ներկայ էին Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահների գագաթաժողովին, ցոյց է տալիս, թէ համանախագահ երկրներն ինչպիսի յատուկ կարեւորութիւն են տալիս նոր լարուածութեան կանխարգելմանը, ձեռք բերուած պայմանաւորուածութիւնների իրականացմանը՝ բանակցային գործընթացը վերսկսելու պայմաններ ստեղծելու համար: Յուսով ենք, որ այս անգամ Ատրպէյճանը չի խորտակի համանախագահ երկրների յոյսերը, միջազգային հանրութեան սպասելիքները»:*

# «Մի Կարծէք, Թէ 200 Միլիոն Դոլարի Զինամթերքը Մէկ Ճամպրուկի Մէջ է Տեղաւորուելու Ու Հասնելու Հայաստան. Արծրուն Յովհաննիսեան

*Մի կարծէք, թէ 200 միլիոն դոլարի զինամթերքը մէկ ճամպրուկի մէջ է տեղաւորուելու ու հասնելու է Հայաստան: Այս մասին լրագրողների հետ զրոյցում ասել է ՊՆ մամուլի խօսնակ Արծրուն Յովհաննիսեանը՝ անդրադառնալով այն հարցին, թէ ե՞րբ կը հասնի Հայաստան 200 միլիոն վարկի զէնքը:*


ՊՆ մամուլի խօսնակ Արծրուն Յովհաննիսեան

*«Զէնքի ձեռքբերման գործընթացը մշտական է, գրեթէ տարի չի եղել, որ մի քանի տարբեր ձեւի, բնոյթի զէնք-զինամթերք, ռազմական նշանակութեան կառավարման եւ այլ համակարգեր չներկրենք, դա մշտական գործընթաց է: Ես չեմ կարող ասել առանձին՝ 200 միլիոնից ի՞նչ է բերուել, ի՞նչ է բերուելու. մի կարծէք, որ այդ 200 միլիոնի զինամթերքը մէկ ճամպրուկի մէջ տեղաւորուելու ու մի օրում հասնելու է Հայաստան»,- նշել է Յովհաննիսեանը:*

# Հրամանատարութիւնը Զգուշացում Է Ստացել Արմենչիկի «Օգնութեան» Առթիւ

*Զօրամասերից մէկում երգիչ Արմենչիկի՝ զինծառայողներին «օգնութիւն» բաժանելու դէպքով կատարուել են ուսումնասիրութիւններ: Այս մասին Աժ-ում լրագրողների հետ զրոյցում ասել է ՊՆ մամուլի խօսնակ Արծրուն Յովհաննիսեանը՝ նշելով, որ դէպքը տեղի է ունեցել ԼՂՀ-ում:*


Զօրամասերէն մէկուն մէջ Երգիչ Արմենչիկ «օգնութիւն» կը բաժանէ զինուորներու

*«Որեւէ քրէական, յանցաւոր բան չկայ, տեղի է ունեցել անփութութիւն, որի համար հրամանատարութիւնը համապատասխան զգուշացում է ստացել»,-ասել է նա:*

*Նշենք, որ համացանցում տեսանիւթ է յայտնուել, որտեղ Արմենչիկը զօրամասերից մէկում շարք կանգնած զինուորներին պոլիէթիլենային տոպրակներով ինչ-որ բան է բաժանում, իսկ զինուորները հերթով գալիս ու վերցնում են: Տեսանիւթում երեւում է՝ ինչպէս է Արմենչիկը ժամանակ առ ժամանակ նայում տեսախցիկին: Տեսանիւթը խիստ քննադատութեան է արժանացել հասարակութեան շրջանում՝ զինուորին նսեմացնելուն համար:*

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

## «Միշտ Ստացել Եմ Սպառնալիք Ու Հայհոյանք» Հարցազրոյց Կարօ Փայլանի Հետ



*Սոցցանցերից միշտ ստացել եմ սպառնալիք կամ հայհոյանք, որի թիրախում է եղել իմ հայ ինքնութիւնը: Այդ մասին NEWS.am-ին տուած բացառիկ հարցազրոյցում ասել է Թուրքիայի քրդական «Ժողովուրդների դեմոկրատական» կուսակցութեան պատգամաւոր Կարօ Փայլանը:*

- Թուրքիայի խորհրդարանում տեղի ունեցածից յետոյ Դուք անհանգստանո՞ւմ էք Ձեր անվտանգութեան ու կեանքի համար:

***- Ոչ միայն ինձ, այլ Թուրքիայում ընդդիմութեանը փորձում են լռեցնել եւ մարսել: Մենք էլ շարունակում ենք պայքարել: Իհարկէ, հայ ընդդիմադիր լինելու դէպքում վտանգը աւելի մեծ է: Մեջլիսում տեղի ունեցող դէպքը ծրագրաւորուած էր ու ատելութեան հողի վրայ ինքնադատաստանի փորձ էր:***

- Խորհրդարանում տեղի ունեցած միջադէպից յետոյ Ձեր նկատմամբ ճնշումներ եղե՞լ են Թուրքիայի ազգայնականների կամ իշխանութիւնների կողմից:

***- Սոցցանցերից միշտ ստացել եմ սպառնալիք կամ հայհոյեանք, որի թիրախում է եղել իմ հայ ինքնութիւնը: Խորհրդարանում տեղի ունեցող դէպքից յետոյ աւելի շատ տեսանելի են դարձել ինձ աջակցողների ուղերձները:***

***«Ժողովուրդների դեմոկրատական» կուսակցութեան պատգամաւորների թիրախաւորումներն ու նրանց հասցէին վիրաւորանքները շարունակում են: Դա էլ ղեկավարւում է Նախագահական պալատի կողմից:***

- Թուրքիայի վարչապետ Ահմէտ Դաւութօղլուն հեռանում է: Այդ փաստը ինչպէ՞ս կանդրադառնայ Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականութեան վրայ:

***- Ահմէտ Դաւութօղլուի՝ պաշտօնից հեռացումը նշանակում է նաեւ Թուրքիայում ռեժիմի փոփոխութեան քայլերից մէկը: Իշխանութիւնում գտնուող «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութեան անդամների ասածի պէս «ամէն ինչից յետոյ Թուրքիայում այլեւս հնարաւոր չէ խօսել վարչապետութեան պաշտօնի մասին»: Էրդողանը Դաւութօղլուից յետոյ փնտռում է այնպիսի մէկին, ով լսելու է իր խօսքը: Մենք դա անուանում ենք քաղաքացիական յեղաշրջում:***

***Մինչ Դաւութօղլուն ԵՄ-ի հետ յարաբերութիւնները զարգացնելու քայլեր էր ձեռնարկում, Էրդողանը քաղաքացիական յեղաշրջում կատարեց եւ անմիջապէս յետոյ իր ելոյթում նշեց հետեւեալը. «Դուք՝ ձեր, մենք էլ՝ մեր ճանապարհով»: Փաստօրէն, Էրդողանը ոչնչացրեց ամենափոքր քայլերը: Թուրքիան ամէն օր աւելի է հեռանում ժողովրդավարութիւնից:***

- Պատգամաւոր եղած ժամանակ ինչ-որ աշխատանքներ արե՞լ էք Ստամբուլի հայ համայնքը համախմբելու համար:

***- Երկար տարիներ ղեկավարել եմ համայնքի տարբեր հաստատութիւնները: Հայ համայնքի խնդիրները լաւ գիտեմ: Պատգամաւոր ընտրուելուց առաջ խնդիրների լուծման համար պայքարում էի, հիմա էլ նոյն պայքարը տալիս եմ խորհրդարանում: Թուրքիայի հայերը մի քանի տարի առաջ ապրում էին աւելի հանգիստ ժամանակաշրջանում, իսկ հիմա զգում են Հրանդ Դինքի ասած «աղաւնու յուզմունքը», այսինքն անհանգիստ են:***

***Հայերը կարող են գոյատեւել ժողովրդավար Թուրքիայում: Ես պայքարում եմ այս մտքի իրականացման համար:***

- Պատգամաւոր դառնալուց յետոյ կարողացե՞լ էք հայ համայնքի որոշ խնդիրները լուծել:

***- Թուրքիայի հայերը ունեն ներկայացման խնդիր: Հայերը ներկայ պահին չեն կարողանում ընտրել պատրիարքին եւ հիմնադրամների ղեկավարներին: Ընտրական համակարգը գտնւում է կողպէքի տակ, շարունակում ենք աշխատել այդ խնդիրները լուծելու համար: Բացի այդ, զբաղւում եմ հայկական դպրոցների հարցերի եւ չվերադարձուող անշարժ գոյքերի հետ: Կարճ ժամանակ առաջ հարց եմ ներկայացրել, Տիյարպեքիրի Սուրի շրջանում պետականցուող տարածքների վերաբերեալ, որը ընդգրկում է Սուրբ Կիրակոս Հայկական Եկեղեցին եւ այլ ազգերին պատկանող սրբավայրերը: Շարունակում ենք հետեւել թեմայի վերաբերեալ զարգացումներին: Այս ամէնը չեն կարող լուծուել արագ, բայց բոլորի համար շարունակում ենք աշխատանքներ կատարել:***

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

## Սերժ Սարգսեան Բաւարարուած է

*Շարունակուած էջ 1-էն*

*վայրը», - յայտարարած է Լաւրով:*

*Սերժ Սարգսեանի համաձայն, Ալիեւ չէ առարկած, միայն թէ Հայաստանի Նախագահին այս պարագան տակաւին շատ հաւատք չի ներշնչեր:*

*«Ատրպէյճանի Նախագահը, նայելով համանախագահներին եւ ինձ, ասում է, որ մենք ենք նախաձեռնել ապրիլեան այդ գործողութիւնը: Վստահ եմ՝ պատկերացնում էք իմ պատասխանը, բայց սա է: Ատրպէյճանի Նախագահն այսօր տասնեակ անգամ կրկնեց, որ Ատրպէյճանը միայն ու միայն խաղաղութեամբ է ուզում լուծել այս հարցը: Լաւ վիճակ չի, բայց իրական վիճակը դա է», - ըսած է Հայաստանի Նախագահը:*

*ապրիլեան իրադարձութիւններուն վերաբերեալ, բայց ամենաճիշդ ձեւակերպումն այ է, որ զինուած ուժերը կատարած են իրենց առջեւ դրուած խնդիրը՝ ձախողցնելով հակառակորդի ծրագիրը՝ ճեղքել ու քայքայել հայկական ճակատը:*

*Միաժամանակ, Սերժ Սարգսեանը հաստատած է տարածքային կորուստները յիշելով յստակ թիւեր: «Հայկական ուժերը, որոնք որպէս անվտանգութեան գօտի ունէին 800 հազար հեկտար, կորցրել են 800 հեկտարի չափ, դա մէկ հազարերորդն էլ չկայ, ռազմավարական կամ մարտավարական առումով այդ տարածքները որեւէ նշանակութիւն չունեն, զուտ հոգեբանական առումով, այո՛, ատրպէյճանցիները կարող են իրենց ժողովրդին համոզել, որ ինչ-որ մի արդիւնքի հասել են», - ըսած է Սարգսեան:*



*Նախագահ Սերժ Սարգսեան օդանաւին մէջ հարցազրոյց կ'ունենայ հայ լրագրողներու հետ*

*Ընդհանուր առմամբ Սերժ Սարգսեան բաւարարուած է հանդիպման արդիւնքներով, նոյն ատեն սակայն, ըսած է, եթէ Ատրպէյճան դրժէ խոստումը՝ խախտելով զինադադարը, Հայաստան համարժէք պատասխան պիտի տայ: «Ես չեմ կարծում, որ վաղուանից ընդհանրապէս բացառուելու են խախտումները, բայց յուսով եմ, որ շատ աւելի հանդարտ կը լինի, քան եղել է մինչ այսօր», - լրագրողներու հետ զրոյցի ընթացքին յայտարարած է Նախագահը:*

*Սարգսեան ըսած է, որ կրնայ օգտագործել «յաղթանակ» բառը՝*

*Հայաստանի Նախագահը լրագրողներուն վստահեցուցած է, որ զինուած ուժերը ի վիճակի էին վերականգնել այդ ստատուս քոն, բայց ընտրութեան խնդիր էր: «Արդեօ՞ք արժէր այդ 800 հեկտարի համար զոհել եւս 35, 40 կամ 80 հայրենասէր տղաներին, որոնց կարիքը մենք դեռեւս շատ ենք ունենալու», - ըսած է Սերժ Սարգսեան՝ աւելցնելով - «Երեւանում՝ սրճարանում նստած, քարտէզներ են գծում, ուղիներ են ցոյց տալիս: Ես էդպիսի մարդկանց առաջարկում եմ՝ իրենք գնան վերցնեն»:*

## Գերմանիոյ Խորհրդարանէն Ներս

*Շարունակուած էջ 1-էն*

*սակցութիւնը՝ քուէարկութեան չդնել բանաձեւը:*

*«Մերկել չուզեր սրել գերմանա-թրքական կապերը՝ առնուազն այն պատճառով, որ Գերմանիոյ մէջ թրքական ծագում ունի մօտ 4 միլիոն մարդ: Սակայն, իշխող համախոհական կառավարութեան անդամները կը գիտակցին, որ այսպէս կարելի չէ շարունակել, երբ տարբեր երկիրներէ, որոնց շարքին Վատիկանէն կը հասնին Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալու մասին յայտարարութիւններու հզօր ալիքը», - կը գրէ թերթի մեկնաբանը:*

*Քրիստոնեա-դեմոկրատներու եւ քրիստոնեա-սոցիալիստներու միութիւնը, կանաչներն ու Սոցիալ Դեմոկրատները համաձայնութեան եկած են Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալու հարցով:*

*«Ֆայնանշըլ Թայմզ» կ'եզրակացնէ որ, գրեթէ վստահ կարելի է ըսել, որ Պունտեսթակը կ'ընդունի բանաձեւը:*

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

# ՍՈՒՐԻԱՆ ՆՈՐ «ՍԱՅՔՍ-ՓԻՔՈ»Ի ԳԼԽԱՒՈՐ ՏԱՐՐԱԼՈՒԾԱՐԱՆՆ Է




ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

Մայիսի 16-ին իր լրումին պիտի հասնէ Միջին Արեւելքի համար մշակուած «Սայքս-Փիքօ» համաձայնագրին 100-ամեակը: Այս համաձայնութեամբ է, որ Օսման-եան կայսրութեան փլուզման նախօրէին Մեծն Բրիտանիան եւ Ֆրանսան սեղանի վրայ դրին Միջին Արեւելքը իրենց միջեւ բաժնելու ծրագիրը: Այդ քաղա-քական քարտէզին շնորհիւ եղած բաժանումները կը տեւեն ցայսօր: Ճիշդ է նաեւ, որ «Սայքս-Փիքօ» համաձայնագրի երկու հիմնական հովանաւորները այսօր առաջուան ազդեցութիւնը չունին Միջին արեւելեան տարածքաշրջանին վրայ, բայց եւ այնպէս 100 տարուան ժամանակ մը բաւարար է, որ Սուրիան, Իրաքը, Յորդանանը, Լիբանանը եւ այլ երկիրները տարբեր առումներով այս երկիրներու գլխաւոր արբան-եակները համարուին:

Տարբեր առիթներով խօսուած է այս համաձայնագրին ժամանա-կավրէպութեան մասին: Համա-ձայնագրին հինցած ըլլալը կը պայմանաւորուի մի քանի կարեւոր ազդակներով, որոնց թուարկումը անհրաժեշտ է՝ փորձել հասկնալու համար, թէ յառաջիկայ հանգրուա-նին կազմուելիք նոր Միջին Արեւելքը ինչ հաւանական պատկեր կրնայ ունենալ:

Այդ հանգամանքները հետեւ-եալներն են.-

ա.- Շրջանին մէջ ազդեցութ-իւն ունեցող երկիրները փոխուած են: Մինչ մօտիկ անցեալին Մեծն Բրիտանիան եւ Ֆրանսան էին, որոնք կը հովանաւորէին այս տարածքները, այսօր այդ դերը տրուած է այլ երկիրներու:

բ.- Շրջանին մէջ մեծագոյն դեր ունեցող երկիրը Միացեալ Նահանգներն է:

գ. Միացեալ Նահանգներ այսօր կը գիտակցի, որ առանձինն անկարող է վարել այս տարածքա-շրջանը:

դ. ԱՄՆ-ի հետ ընդհանուր խաղին մասնակից են Ռուսիան, Իրանը, Սէուտական Արաբիան եւ Թուրքիան:

Այս ընդհանուր վիճակներուն մէջ բացայայտ է նաեւ, որ նոր քարտէզի կազմութիւնը, կամ վերը նշուած տիրութեանց հիմնական դերերու բաշխումը կը կատարուի Սուրիոյ մէջ:

Վերը թուարկուած կէտերէն բացի կայ նաեւ տնտեսական գործօնը: Գերտէրութեանց միջեւ առկայ շահերու խաչաձեւումին հետեւանքով է, որ այսօր Միջին Արեւելքը դարձած է պատերազմի արիւնալի դաշտ: Այս առումով պէտք է նշել, որ 2010-ին Դամասկոսի մէջ կայացուած միջազգային համաժողովի քուլիս-ներուն մէջ քննարկումի դրուած է Սուրիոյ ունենալիք դերը շրջանին մէջ, ե՛ւ Ֆրանսայի ե՛ւ Թուրքիոյ նախագահներուն կողմէ Պաշշար Ասատին առաջարկ ներկայացուած է հեշտացնել Քաթարէն դէպի Թուրքիա հասնող նաւթատար խողովակներու կառուցման առընթեր անոր աջակցութիւնը: Ասատ կտրականապէս մերժած առաջարկը, առաջարկող կողմերուն բացատրելով, որ նման քայլ պիտի վնասէ Սուրիա-Ռուսաստան ռազմավարական յարաբերութ-իւնները: Այդ յարաբերութիւնները բնականաբար Ասատ ժառանգած է իր հօրմէն՝ Հաֆէզ Ասատէն, որ Խորհրդային Միութեան ամէնէն վստահելի դաշնակիցն էր շրջանին մէջ: Այստեղ դաւադրութեան տեսութիւնը չէ, որ կարեւոր առանցք կը հանդիսանայ, այլ շահերու վրայ հիմնուած եւ այդ շահերու բախումներէն բխող հակասութ-իւնները: Սուրիոյ պատերազմը հետեւաբար արդիւնք է տնտեսական անյետաձգելի շահաբաշխումի մը, որ սակայն վերջին պահուն կը վերածուի զինուորական բախում-ներու՝ յետաձգելով ոչ միայն նաւաթատար խողովակներու կառուցումը, այլ խլելով հազարա-ւոր մարդոց կեանքը եւ աւերակուած վիճակի մատնելով դէպքերէն առաջ 24 միլիոն բնակչութիւն ունեցող Սուրիան:

Այս տուեալներուն լոյսին տակ եւ արդէն 5 տարիէ ի վեր ընթացող պատերազմը, բացի անկէ, որ կործանած է Սուրիոյ մեծագոյն քաղաքները, գետնի վրայ չէ յաջողած հակամարտող կողմերէն որեւէ մէկուն դրական առաջընթաց ապահովել: Պատերազմի գնով գետնի վրայ փոփոխութիւն իրականցնելու անհնար ըլլալը այսօր լաւապէս հասկցած են Միացեալ Նահանգներն ու Ռուսիան, որոնց բարձրագոյն մակարդակի շփում-ներուն իբրեւ հետեւանք՝ կարելի եղած է այսօր «անկայուն հրադադար» մը հաստատել Սուրիոյ մէջ: Երկու գերտէրութեանց արտաքին գործոց նախարարները տարբեր առիթներով կը խօսին հրադադարի պահպանման անհրա-ժեշտութեան մասին: ՄԱԿ-ի Սուրիոյ հարցերով յատուկ բանագնաց Սթէֆան Տէ Միսթու-րայի կազմակերպած ժընեւեան բանակցութիւններուն մասին բոլոր կողմերը ունին նոյն տեսակէտը եւ անոնց կողմէ այս բանակցութ-իւնները արդէն կը համարուին «մեռեալ» բանակցութիւններ: Այս առումով երեւելի է, որ ընդդիմութ-եան գլխաւոր մղիչ ուժ հանդիսացող Րիատը եւս կը հասկնայ, որ Սուրիոյ տագնապին հանգուցալուծման հանգրուանը տակաւին չէ հասունցած: Մինչ ընդդիմադիր կողմերը իրենց ունեցած խաղա-քարտերը կը փորձեն տարբեր հնարքներով դնել բանակցութեանց սեղանին, անդին Սուրիոյ իշխանութիւնները կը թուին աւելի հանգիստ ըլլալ:

Ռուսական միջամտութեամբ եւ նեցուկով ամրագրուած սուրիական բանակը կը շարունակէ կռուիլ տարբեր ճակատներու վրայ: Իշխանութիւնները նոյնպէս կը փորձեն բանակցութեանց սեղանին ներկայանալ իրապաշտ եւ գործադրելի առաջարկներով:

Սակայն նոյն բանակը այսօր ի զօրու չէ արեան գնով նոր մաքառումներու երթալ, գրաւելու այն հատուածները, որոնք կը գտնուին իր իշխանութիւնէն դուրս, բայց յստակ է, որ այդ բանակը չի գտնուիր վերջնական հատնումի կամ պարտութեան դռներուն առջեւ:

Եթէ զինուորական որեւէ մեծ շարժ պիտի կատարուի, ապա այդ մէկը պայմանաւորուած պիտի ըլլայ բացառապէս միջազգային դաշնակից ուժերու մասնակցութ-եամբ ըլլալիք գործողութեամբ, կամ՝ «կանաչ լոյս»ով: Այս առումով պէտք է լաւապէս հասկնալ, որ գետնի վրայ ըլլալիք որեւէ յառաջխաղացում պէտք է ըլլայ «բոլորին համար եւ՝ յանուն»: Այսինքն բացառուած է, որ Րիատի հովանին վայելող «Ճայշ Ալ-Իսլամ»ը կամ Քաթարի եւ այլ երկիրներու օրհնութիւնը կրող «Ալ-Նուսրա» ճակատը յաւելեալ դիրքեր կորսնցնեն ու պարտուին: Այսօրուան գլխաւոր թիրախը եւ տեղաշարժ կատարելու առանցքը ԻՇԻՊ-ն է, որուն անպարտելիութ-իւնը նոյնպէս հովանաւորուած է մինչեւ ցնոր տնօրինութիւն:

Այս խճճուած պատկերին առջեւ յստակ է նաեւ, որ վաղուան Միջին Արեւելքի հիմնական սահմանները կը գծուին Սուրիոյ մէջ: Ու այս բոլորէն անդին, այսօրուան խաղացողներուն կամքը այդքան ալ կարեւոր չէ, ինչքան Միացեալ Նահանգներու կամքը, որ սակայն յառաջիկայ ամիսներուն զբաղուած պիտի ըլլայ նախագա-հական ընտրութեան օրակարգով:

Ապահովական առումով Մոսկուա եւ ԱՄՆ վճռած են ամէն գնով պահպանել ներկայիս գործող հրադադարի պայմանաւորուա-ծութիւնը: Իսկ ընդդիմութեան կողմէ գետնի վրայ կատարուած բոլոր փորձերը կը միտին ամրապնդել իրենց դիրքերը, սակայն առանց շօշափելի արդիւնք-ներու հասնելու:

Սուրիոյ մէջ ընթացող զարգացումները կրնան աւարտիլ միայն այն ժամանակ, երբ պատրաստ ըլլայ շրջանին համար արդէն իսկ գծուած նոր քարտէզը, որ հիմքը պիտի դառնայ նոր «Սայքս-Փիքօ»յատիպ համաձայ-նութեան մը:

www.massispost.com
daily news updates

Bedros S. Maronian 818/500-9585
Siamanto B. Maronian 818/269-0909
SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs
6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048
805 East Broadway Glendale, CA 91205
300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101
• Life Insurance
• Health Insurance
• Group & Individual
• Long Term Care
• Disability
• Estate Planning
• Will & Living Trust
• Full Annual Review
• Mortgage Protection
• College Planning
• Workman's Compensation
• Employee Benefits
• Annuity
• IRA
• 401K & 403B
A.B.A. INSURANCE SERVICES
New York Life · Anthem · BlueShield · Aetna · Health Net · CIGNA · KAISER PERMANENTE
Seniors 65 & Up · Medicare Supplements · Insurance · Prescriptions Drugs RX · Benefits
Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ Է
Coverage & Protection should be on the top of your priority list.



# ՀՊԱՐՏԱՆԱ՞Լ ԹԷ ՈՂԲԱԼ

ՈՍԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ

Երկար տարիներու ազնիւ բարեկամս, երբեմնի դասընկերս, որ աւելի քան 45 տարիներէ ի վեր կը բնակի Ժընեւի մէջ, հեռաձայնային խօսակցութեան մը ընթացքին կը հաղորդէր, թէ Հայոց ցեղասպանութեան 101-րդ տարելիցին առիթով, 24 Ապրիլ 2016-ին, յուշահանդէս մը տեղի ունեցած է Ցիւրիխի մէջ, կազմակերպութեամբ Հայ Դպրոցական եւ Ընտանեկան Միութեան, հայ ժողովուրդի միլիոնաւոր նահատակներու անմեռ յիշատակին նուիրուած: Բարեկամիս տուած տեղեկութեան համաձայն, այս բացառիկ ձեռնարկին եւ դասախօսութեան ներկայ եղած են աւելի քան 200 հայ եւ զուիցերիացի ունկնդիրներ:

Ապա շարունակեց բարեկամս, ըսելով «Շուրջ 50 վայրկեան, ցոլապատկերներու ուղեկցութեամբ, գերմաներէն լեզուով՝ Կոմիտաս Վարդապետի կեանքին, ստեղծագործական հանճարին եւ երաժշտական ժառանգութեան մասին խօսեցաւ արժանապատիւ Դոկտ. Տ. Աբէլ քահանայ Մանուկեանը: Խանդավառութիւնը աննախադէպ էր.....: Պահ մը սիրտս հպարտութեամբ լեցուեցաւ, որովհետեւ արժանաւոր եկեղեցական մը, իր ամէնօրեայ աշխատանքներուն, համալսարանական դասաւանդութեանց կողքին յաջողած էր հայ հանճարը ծանօթացնել օտար հասարակութեան. ա՛յն ժողովուրդի զաւակներուն, որոնց նախահայրերը մարդկային արժանիքներու խոր գիտակցութեամբ ու կարեկցութեամբ օգնութեան ձեռք երկարած էին ցեղասպանութենէն ճողոպրած հայ որբերուն եւ տարագրեալներուն:

Կարճ լռութենէ մը ետք, բարեկամս յանդիմանական շեշտով մը հարցուց. ինչպէ՞ս կրնայ ըլլալ որ այսպիսի տաղանդաւոր պատրաստուած եկեղեցական մը բանբասանքի եւ հալածանքի ենթակայ է Ժընեւի Նորանշանակ եւ ո՛չ ընտրեալ «առաջնորդին» կողմէ:

Պատասխանելէ առաջ, փորձեցի բարեկամս հանդարտեցնել, յիշեցնելով հայկական առածը. «պտղատու ծառին քար նետողներ շա՛տ կ'ըլլան»: Ինծի այնպէս թուեցաւ որ տուած պատասխանս գոհացուցիչ չէր, եւ բարեկամս աւելի հանգամանաւոր ու համոզիչ, տրամաբանական պատասխան մը կ'ակնկալէր ինձմէ: Հետեւաբար մեր տարիներու բարեկամութիւնը զիս կը պարտաւորէ որ այս մասին նաեւ գրութեամբ արտայայտուիմ եւ մտորումներուս հաղորդակից դարձնեմ հայ հասարակութիւնը:

Գուսան Վրդ. Ալճալեանը յանդգնութիւնը ունեցած է կարգակից օծեալի մը հասցէին աններելի բամբասանքներ տարածելու գաղութէն ներս: «Կարգազուրկ է, իրաւունք չունի քահանայ կոչուելու: Առիթ պէտք չէ տալ որ պաշտօնական վայրերու մէջ աղօթք կատարէ: Պէտք չէ գինք հրաւիրել գաղութային ձեռնարկներու եւ մանաւանդ յուշահանդէսներու առիթներով դասախօսելու», եւ տակաւին նմանօրինակ ձափռտուքներ: Այս ի՞նչ ողորմելիութիւն է. ո՞ր դարուն մէջ կ'ապրինք արդեօք: Ի պէտս զարգացելոց, վարդապետին կը թելադրենք կարդալ www.vanagan.com կայքէջի վրայ զետեղուած «Ողջամտութեան բացակայութիւնը» յօդուածը: Լրջօրէն պէտք է մօտենալ այս հարցին, որովհետեւ նմանօրինակ երեւոյթ մը համազգային գայթակղութիւն է, եւ բոլոր անոնք որոնք «ղեկավար» դիրքերու վրայ կը գտնուին՝ պատասխանատուութեան իրենց բաժինը ունին այս անփառունակ կացութեան մէջ: Նոյնպէս նաեւ անհանդուրժելի է կրաւորական դիրքը մեր ժողովուրդին, որ չի՛ փորձեր վերականգնել իր իրաւունքները համայնքային մեր կեանքէն ներս եւ կը հանդուրժէ մենատիրութիւնն ու բռնակալութիւնը:



Թէեւ ծանօթ ենք Գուսան Վրդ.ի անցեալին՝ որպէս նախկին միաբան Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքին, բայց եւ այնպէս մեր նպատակէն շեղած կ'ըլլանք եթէ մանրամասն կերպով խօսինք այդ մասին: Մեր դժգոհութիւնը սկզբունքային է եւ հետեւաբար մեր պահանջները համազգային են, որովհետեւ նման երեւոյթներու առջեւ գտնուած ենք եւ կը գտնուինք զանազան գաղութներու մէջ: Հայաստանեայց Եկեղեցին միշտ ալ բարդութիւններ ունեցած է իր դաժան ճակատագրին բերումով, բայց ժամանակն է որ անցեալի մեր տարակարծութիւններէն ու յուսախաբութիւններէն դաս մը քաղենք եւ վերականգնենք եկեղեցականութեան, եկեղեցւոյ եւ ազգին արժանապատուութիւնը:



Այսօր, հողմացրիւ հայ ժողովուրդը իր պատմութեան ամենակարեւոր անկիւնադարձային ժամանակաշրջանը կ'ապրի: Անհրաժեշտ է որ վերականգնենք ազգային արժէքներու իմացողութեան ապառաժեայ մեր պատուանդանը: Այսուհետեւ անյապաղ պարտինք կատարել հրապարակային քննարկումներ մեր քաղաքական, եկեղեցական եւ մշակութային վատառողջ կեանքի մասին, եւ ժողովուրդի ամբողջական մասնակցութիւնը ապահովել այս նոր զարթօնքին, որովհետեւ ժողովուրդը անտեսուած է մինչեւ այսօր եւ խաղը կը դառնայ քանի մը տասնեակ «մենաշնորհեալ» անձերու միջեւ, թէ՛ հայրենիքէն ներս եւ թէ՛ սփիւռքի տարածքին:

Հայոց պատմութեան մէջ՝ եկեղեցի, կրօնք, հայրենասիրութիւն, ազգային ինքնութրոյնութիւն եւ մշակոյթ ընդելուզուած են այնպիսի շաղախով մը, որ կարելի չէ իրարմէ բաժնել այս ներդաշնակութիւնը: Հետեւաբար՝ժամանակն է որ վերարժեւորենք Ազգին եւ Եկեղեցիին փոխյարաբերութիւնները, եւ, ո՛չ թէ ճառախօսութիւններով եւ մակերեսային մօտեցումներով, այլ ընդհակառակը՝ ամբողջական մասնակցութեամբ եւ գործօն դերակատարութեամբ լուծումներ առաջարկենք ի խնդիր մեր համայնական շահերուն:

# ՔԸՐՔ ՔԸՐՔՈՐԵԱՆԻ ԱՐՑՈՒՆՔԸ

ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱՒԻԹԵԱՆ

Հայրենի «ԿԵՆՏՐՈՆ» հեռատեսիլի կայանէն տրուած հարցազրոյցի մը ընթացքին, ամերիկահայ ծանօթ հասարակական գործիչ եւ խմբագիր Յարութ Սասունեան, որ կը վարէր միլիառատէր հայ բարերար Քըրք Քըրքորեանի հիմնած «ԼԻՆՍԻ» բարեսիրական հաստատութեան հայկական բաժնի տնօրէնի պաշտօնը, պատմեց թէ ինչպէ՛ս նշմարած էր արցունք Քըրքորեանի աչքերուն մէջ, երբ ան առաջին անգամ ոտք կը կոխէր հայրենի հողին վրայ: Այդ ազգային համեստ բարերարը, որ առանց ֆանֆարի տուած էր հարիւր միլիոն ամերիկեան տոլար Հայաստանի ճամբաներու նորոգութեան եւ շինարարութեան համար եւ արդարօրէն արժանի դարձած էր ազգային հերոս կոչումին ու պատուին, ըստ Սասունեանի, որ ճանչցած էր Քըրքորեանը երկա՜ր տարիներ, իր ներկայութեան երբեք այդքան յուզուած չէր եղած: Քըրքորեան, որ պողպատեայ վճռակամութեամբ եւ զօրաւոր նկարագրով յաղթահարած էր ամէն տեսակի դժուարութիւն Ամերիկայի պէս կուփամարտ պահանջող բեմի եւ հարթակի վրայ, հայրենի հողին վրայ վար դրած իր գրահները՝ դարձած էր կարծէք մանուկ իր մօր գրկին մէջ: Եւ պատասխան տալով հարցումի մը, թէ Քըրքորեան իր կտակին մէջ բան մը թողա՞ծ էր Հայաստանին ու հայութեան, Սասունեան ըսաւ, որ դատական եւ օրինական (probate) հարցերու լուծումէն ետք, կտակակատարը, որ լաւ գիտէ Քըրքորեանի ազգային շունչն ու ոգին, անկասկած որ ժառանգը բաժնած ատեն նկատի պիտի առնէր անկէ մեծ բաժին հանելու յօգուտ հայութեան եւ Հայաստանի:

Քըրք Քըրքորեանի արցունքը հայրենի հողին վրայ ունի խորհրդանշական իմաստ:

«Որեւէ անձ իր երկրէն ու հայրենիքէն աւելի մեծ եւ կարեւոր չի կրնար ըլլալ», ըսած էր ժամանակին Լիբանանի նահատակ վարչապետ Ռաֆիք Հարիրին, հակառակ անոր որ ոմանք զինք կը նկատէին Լիբանանի տնտեսութեան ու դրամանիշի ապահովագրողը իր ունեցած հսկայ հարստութեան եւ ամուր միջազգային կապերուն շնորհիւ: Նոյնպէս ալ, Քըրք Քըրքորեանը, Մեծն Ամերիկան «գրաւող» միլիառատէր այդ մեծ հայը, հայրենի հողին վրայ իր արցունքոտ աչքերով ցոյց կու տար, թէ հայը որքան ալ իրեն պէս մեծ ըլլայ ու կարեւոր, չի կրնար ըլլալ աւելի մեծ ու կարեւոր իր երկրէն կամ հայրենիքէն:

Քըրքորեանի արցունքը եւ իրեն պէս միլիոնաւոր սփիւռքահայերու արցունքները որ կը հոսին հայրենի հողին վրայ ոտք կոխելով, պէտք է հասկնալ որպէս աղբիւր ու գետ գոհաբերութեան եւ մտատանջումի, որ պատրաստ է յագեցնելու հայրենի ժողովուրդի յառաջ ընթանալու ծարաւը եւ ոռոգելու ու ծաղկեցնելու մեր հայրենի համեստ ու խեղճ գիւղերը: Հայաստանի մեր ժողովուրդն ալ լեցուն է կենսունակ եւ յաջողելու կարելիութիւններով: Պատճառ չկայ որ երկու կողմերու կարելիութիւնները չօգտագործուին եւ միասնաբար գործի չլծուին՝ որպէսզի ունենանք իսկապէս ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ այն հնարաւոր-շինարար պետութիւնը, որուն համար, որուն շուրջ եւ որուն առջեւ պիտի գան խոնարհելու մեր բարեկամներն ու թշնամիները:



Վստահաբար մեզմէ շատեր, որոնք ապրած են Երրորդ Աշխարհ կոչուող թերաճ երկիրներու մէջ, ցաւով տեսած են ու ականատես դարձած հանքային ու ոչ-հանքային աղբիւրներու եւ ակերու վատնումը եւ դէպի անօգուտ սպառում հոսող անոնց ընթացքը: Հայաստան թէեւ կը պատկանի Երրորդ Աշխարհի տնտեսական ընտանիքին, ունի տարբեր ընթացքի մը հետեւելու կարելիութիւնը, որովհետեւ ունի լեռ ճեղքելու փորձառութիւն (Արփա-Սեւան փապուղի) սովետական շրջանէն եւ ունի նաեւ ուրիշին նախանձը շարժող սփիւռքեան ուժ ու կորով: Քըրքորեանի նմանները շատ են Հայ Սփիւռքի մէջ եւ կարելիութիւններով լեցուն, որոնք խառնուելով հայրենի ժողովուրդի բնազդային կարողութեան ու նկարագրային տոկունութեան հետ, հրաշքներ կրնան գործել եւ Հայաստանը դարձնել թեթեւ ճարտարարուեստի ու արդիական գիտութիւններու կեդրոն:

Կարելի չէ շարունակել նախկին վիճակով (status quo) Արցախի վերջին ճակատումէն ետք, որուն պատճառաւ բազմաթիւ զոհեր տրուեցան եւ մեր ինքնավստահութեան հիմերը խանգարուեցան: Քըրք Քըրքորեանի արցունքը անցեալին՝ թող ըլլայ դաս եւ օրինակ մեր պատասխանատուներուն, որ իրեն նմաններուն հետ գործակցելու լաւագոյն ուղին ճիշդ ու ճշմարիտ հայրենասիրութիւնն է, որ հայ մարդուն կու տայ հայրենի հողին վրայ գործելու եւ ստեղծելու անկաշկանդ ու անսակարկ կարելիութիւն: Այն ատեն, հայ բանակ ու զինուոր, օժտուած գիտական բարձր մակարդակով ձեռք բերուած զինուժով, պիտի արդարացնեն մեր «աջ զարկենք, ձախ զարկենք» ազգային երգին իմաստը եւ վերջ տան թշնամիի ռազմական ախորժակին, փոխանակ մաշելու պաշտպանողական մարտերով ու պատերազմներով:

## ԼԱՐՔԻ ՓԱՅԼՈՒՆ ՀԱՄԵՐԳԸ

### ԲԱՐՍԵՂ ԹՈՒՄԱՆԵԱՆ ԵՒ ՇՈՒՇԻԿ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ ԴԻՒԹԵՑԻՆ ՆԵՐԿԱՆԵՐԸ ԻՐԵՆՑ ԳԵՐԱԶԱՆՑ ԿԱՏԱՐՈՒՄՆԵՐՈՎ



Անցեալ Կիրակի, 15 Մայիս, 2016, աւելի քան հազար երկու հարիւր երաժշտասէրներ ըմբոշխնեցին Փասատինայի «Ամպասատոր» թատերասրահին մէջ Լարքի կազմակերպած մեծ համերգը:

Արդարեւ, հայ եւ միջազգային դասական երաժշտութեան սոյն համերգին իր մասնակցութիւնը բերած էր Լարքի 60 երաժիշտներէ բաղկացած սիմֆոնիք նուագախումբն ու 58 հոգինոց երգչախումբը, ղեկավարութեամբ վաստակաշատ խմբավար Վաչէ Պարսումեանի:

Երեկոյթի գլխաւոր աստղն էր անուանի բամբ (Bass) երգիչ եւ միջազգային համբաւի արժանացած, բազմաթիւ մրցանակներու դափնեկիր՝ Բարսեղ Թումանեան: Ան մենահամերգներով հանդէս եկած է եւ դերերգեր ստանձնած աշխարհի շատ մը օփերաներու մէջ (Մոսկուա, Ուաշինկթըն, Լոնտոն, Փարիզ, Պոն, Մելպուրն, եւայլն): Կիրակի օրուան համերգին համար Բ. Թումեան ընտրած էր ճոխ ու այլազան յայտագիր մը Վերտիի, Ռախմանինովի, Պէլլինիի եւ Մոձարթի գործերէն: Առանձնապէս ուշագրաւ էին Պիզէի «Գարմէն» օփերայի «Թորէատորներու Քայլարշաւը», «Ձեր կենացը» երգը (ընկերակցութեամբ երգչախումբին), ինչպէս նաեւ Ռոսինիի Տօն Պասիլիոյի դերերգը «Սէվիլիայի Սափրիչը» օփերայէն:

Յայտագրին մէջ մասնաւոր տեղ յատկացուած էր նաեւ հայ կոմպոզիտորներու ստեղծագործութիւններու «Գուսանի Դերերգը» (Արմէն Տիգրանեան) նոյն հեղինակէն «Ոհ Իմ Զքնաղ» («Դաւիթ Բեկ» օփերայէն) եւ Տիգրան Չուխաճեանի «Արշակի Դերերգը» (Արշակ Բ. օփերայէն):

Բ. Թումանեանի բոլոր կատարումները տեղի ունեցան իւրայատուկ մեկնաբանութեամբ, գեղարուեստական բարձր որակով եւ ապրումով: Արդարեւ իր բեմական տիրական կեցուածքը, նիւթին տիրապետելով ու ապրումով արտայայտուիլը՝ ընդելուզում մը յառաջացուց իր եւ ունկնդիր հասարակութեան միջեւ: Երեւոյթ մը որ յատուկ է տաղանդաշատ արուեստագէտներու միայն:

Նոյնը կրնանք ըսել նաեւ օրուան երկրորդ փայլող աստղին, երիտասարդ ու տաղանդաւոր սոփրանօ Շուշան Պարսումեանին: Արդարեւ, տարուէ տարի եւ ելոյթէ ելոյթ ինքզինք գերազանցող այս խոստմնալի հայուհին՝ արդէն ծանօթ անուն է ոչ միայն մեր քաղաքին այլ եւրոպական շատ մը ոստաններու մէջ: Մեծ Եղեռնի 100 ամեակին առթիւ պատեհութիւնն ունեցած էինք նաեւ զինք լսելու Ian krouse-ի յօրինած Armenian Requiem-ի մէջ ղեկավարութեամբ մաեսթրօ Վաչէ Պարսումեանի:

Շուշան Պարսումեան Կիրակի օր երգեց Վ. Պէլլինիի, Մոձարթի ինչպէս նաեւ Ա. Տիգրանեանի «Արի Հարալօ« (Դաւիթ Բեկ օփերայէն) երգեր: Գերազանց կատարում մըն էր նաեւ Արտեմի Այվազեան-Աշոտ Գարթալեանի «Հայաստան» երգը, որ ուրոյն ձայնային յատկութիւն պահանջող դժուարին ելեւէջներով յօրինում մըն է զոր մեկնաբանեց մեծ վարպետութեամբ:

Մասնաւոր ուշադրութեան արժանի էր Լարքի երգչախումբը, որ օրուան գեղեցիկ համաստեղութեամբ մաս կը կազմէր առաւել եւս արժեւորելով համերգի բնոյթը, ղեկավարութեամբ Վաչէ Պարսումեանի:

Կը շնորհաւորենք Լարք Երաժշտական Ընկերակցութիւնը իր այս բացառիկ յաջող ու պատուաբեր միջոցառումին համար, որուն նպատակներէն մին է մեր ազգային եւ միջազգային երաժշտութիւնը տարածել հայ եւ օտար հասարակութեան մէջ:

Գ. ՄՈԼՈՅԵԱՆ

## ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԸՆՏՐԵՑ ԻՐ ԽՆԱՄԱԿԱԼ ՄԱՐՄՆԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ



Լոս Անճելոսի Իրանահայ Միութեան Խնամակալ Մարմնի 2016-2018 նստաշրջանի Ընտրական Ընդհանուր Ժողովը գումարուեց Շաբաթ, Ապրիլ 2, 2016-ին միութեան կենտրոնատեղում:

Ժողովը նախորդ նստաշրջանի Խնամակալ Մարմնի գործունէութիւնը հանգամանօրէն քննարկելուց յետոյ գնահատեց այն որպէս "գերազանց":

Ժողովն իր օրակարգն աւարտելուց յետոյ, 2016-2018 նստաշրջանի համար ընտրեց Միութեան Խնամակալ Մարմնի երեք նոր անդամները, որոնք փոխարինում են իրենց շրջանը բոլորած երկու անդամներին: Մարմինն իր առաջին նիստի ընթացքում կատարեց պաշտօնների բաժանումը հետեւեալ կարգով՝

Դոքտ. Վահան Գրեգոր՝ Ատենապետ

Դոքտ. Յակոբ Այնթապլեան ՝ Փոխ-Ատենապետ

Պրն. Էրիկ Օվանէսեան՝ Գանձապահ

Դոքտ. Ռոբերթ Բամբան՝ Ատենադպիր

Փաստաբ. Ալբերթ Աբկարեան՝ Խորհրդատու

Ճարտրգտ. Կարօ Մինաս՝ Խորհրդատու

Պրն. Թոմիկ Ալեքսանեան՝ Գլխաւոր Գործավար

OFFICE SPACE FOR RENT IN PASADENA

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave

Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձերով

Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝

(626) 398-0506



# Massis Weekly

Volume 36, No. 19 — Saturday, May 21, 2016


## Armenia, Azerbaijan Pledge To Honor Ceasefire President Sarkisian Questions Aliyev's Commitment

YEREVAN (RFE/RL) — The presidents of Armenia and Azerbaijan agreed to work out safeguards against ceasefire violations around Nagorno-Karabakh and resume their search for a compromise peace deal during talks in Vienna mediated by the United States, Russia and France late on Monday.

Serzh Sarkisian and Ilham Aliyev will meet again as early as next month in an attempt to revive the Karabakh peace process, U.S. Secretary of State John Kerry, Russian Foreign Minister Sergey Lavrov and France's State Secretary for Europe Affairs Harlem Desir said after co-hosting the talks.

"The Presidents reiterated their commitment to the ceasefire and the peaceful settlement of the conflict," read a joint statement issued by them. "To reduce the risk of further violence, they agreed to finalize in the shortest possible time an OSCE investigative mechanism."

"The Presidents also agreed to the expansion of the existing Office of the Personal Representative of the OSCE Chairperson in Office," it said, referring to a small multinational team monitoring the ceasefire regime in the conflict zone.



The U.S., Russian and French mediators have for years pressed the conflicting sides to accept these confidence-building measures, hoping to reverse a steady increase in the intensity and frequency of armed incidents on the Armenian-Azerbaijani frontlines. They have been backed by the Armenian side but effectively rejected by Azerbaijan until recently. The latter has claimed that the proposed measures would only cement the status quo favorable to the Armenians.

Meanwhile, President Sarkisian questioned Azerbaijan's commitment to the ceasefire in the Nagorno-Karabakh conflict zone on Tuesday after he and his Azerbaijani counterpart Ilham Aliyev agreed on confidence-building measures designed to

Continued on page 3

## Bundestag Motion Calls on Univocal Acknowledgement of the Armenian Genocide

BERLIN (Panorama.am) — A legislative motion is included on June 2 Bundestag agenda entitled "The 100th anniversary of the Armenian Genocide happened in 1915/1916: Germany's obligation to encourage reassessment and reconciliation", which is introduced by leftists and number of other MPs.

The bill envisages to univocally acknowledge the facts of systematic massacres of 1,5 million of Armenians and their forced deportation committed by the Young Turks, naming the move as "planned and systematic mass extermination of the Armenia population in the Ottoman Empire as Genocide".

The bill also states that acknowledgment comes in line with provisions of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide adopted by the General Assembly of the United Nations in 1948.

The resolution to be debated particularly highlights the acknowledg-

Continued on page 4

## Armenia Fund Raises $1.1 Million During Emergency Artsakh Telethon




LOS ANGELES — Armenia Fund U.S. Western Region has announced that a total of $1,102,357 was raised during the 6 hours of its Help Artsakh! emergency telethon aired on May 14, 2016 in Los Angeles.

"Armenia Fund is an organization that was born amidst a humanitarian catastrophe in Artsakh in 1992, when hundreds of thousands of Armenians from Artsakh and Azerbaijan became refugees with no shelter, food, heat or means to survive", stated Maria Mehranian, Chair of Armenia Fund's Board of Directors. "Armenia Fund stood by Artsakh through war and peace and will continue to do so. I would like to thank the world wide affiliates of Armenia Fund, specifically Armenia Fund in New York, Toronto, Paris, and Sao Paolo, for their participation in our Telethon with funds raised by their emergency fundraising activities that added $490,000 to the total raised," added Mehranian.

Airing on all major Armenian American television stations, the emergency telethon highlighted stories of bravery, courage, and hope through the destruction of war. The video segments produced in Artsakh showed the massive damage caused by indiscriminate shelling of villages as well as the valor and bravery of young Armenian conscripts who courageously

Continued on page 3

## Pope Francis to Arrive in Yerevan on June 24, Visit Armenian Genocide Memorial




YEREVAN — Pope Francis of the Roman Catholic Church will arrive in Armenia on June 24 for a three day visit that includes a visit to Genocide Memorial at Tsitsernakaberd, attend an ecumenical service in Yerevan's central square and hold an open-air mass in Gyumri, according to Armenian presidential press service.

After the official welcome ceremony at Zvartnots Airport the Pontiff will leave for the Mother See of Holy Etchmiadzin.

The same day Pope Francis will meet with President Serzh Sarkisian at the Presidential Palace. His Holiness is also expected to meet with representatives of the Armenian authorities, civil society and diplomatic corps.

The first day of the visit will be concluded with a meeting with His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians.

In the morning of June 25 Pope Francis will visit the Tsitsernakaberd Memorial and the Armenian Genocide Museum Institute. He will later leave for Gyumri together with the Catholicos of All Armenians to serve a Holy Mass at Vardanants Square. In the evening of June 25 an ecumenical service and a Prayer for Peace will take place at the Republic Square in Yerevan.

On June 26 the Pope will meet with Armenian Catholic Bishops and will participate in a Holy Liturgy and an ecumenical dinner at the Mother See of Holy Etchmiadzin.

Pope Francis and the Catholicos of all Armenians will sign a joint statement and will hold a prayer at Khor Virap Monastery.

# German Intellectuals Call on Angela Merkel to Recognize Armenian Genocide



BERLIN — German intellectuals, including German-Turkish film director Fatih Akin (The Cut) and other artists published an open letter directed to the German Chancellor Angela Merkel and Bundestag calling for the recognition of the Armenian Genocide.

In the open letter the artists call "to take a stand on 2 June and to refer to the crimes committed against the Armenian people as "genocide." This is more than a historical period, more than an apology to the descendants of the victims. "Imagine you lived in Germany and the Holocaust would be denied – would that not be a continuation of the actual fact?"

Among the signatories of the open letter are Markus Rindt, Head of the Dresden Symphony Orchestra, German-Turkish-Armenian composer and guitarist Marc Sinan director of Kampnagel theatre in Hamburg Amelie Deuflhardand the general director of the Saxon State Library, Thomas Bürger.

The Bundestag is set to vote on a cross-party bill on Armenian Genocide on June 2.

Following is the english translation of the open letter:

Berlin / Dresden, 10 May 2016

Dear Madam Chancellor,

Dear Members of the German Bundestag,

Both the current German Parliament and its predecessors have remained silent for the past hundred years regarding the Armenian Genocide. However, partnerships don't break down on the basis of what is said but rather due to what is left unsaid.

Today, we call upon you to take a firm stand on June 2, 2016, and call the crime perpetrated on the Armenian nation by its proper name: as genocide. After all, there is more at stake here than a mere historical classification or an apology to the descendants of the victims. Imagine for a moment that you lived in a Germany where the Holocaust was denied – would this not be tantamount to a perpetuation of the actual crime?

The denial of the Armenian Genocide lays the foundation for the violence of the present day: In 1915, the Armenians were labeled as terrorists and dispossessed of their belongings. In 2015 alone, upwards of 5,000 Kurds were – according to official figures – killed in Turkey due to alleged terrorist connections. Practically the entire center of the city of Diyarbakir was compulsorily expropriated.

Just a few days ago, President Erdogan warned that Armenia was playing with fire in Nagorno-Karabakh, bearing in mind that just over 100,000 Armenians still live in Turkey. We are of the firm persuasion that all these events have been facilitated by the systematic refusal of Turkey to face up to its history, and the fact that both its historical and present-day actions are met by silence on the part of the international community.

The author, Armin T. Wegner, had this to say about 1915: "(…) (I) went to the German Foreign Office, where they knew about everything, but stated that nothing could be done. I (…) had to powerlessly watch the horror unfold, the decimation of a nation. (…) The then Mayor of Aleppo, who was a man of great humanity and decency, sent a telegram to Talaat Pasha, the Minister of the Interior: Hordes of thousands upon thousands of Armenians have arrived. What are we supposed to do with them? And Talaat, the archenemy of the Armenians, telegrammed back: The goal of the deportations is extermination."

To ensure that the German-Turkish partnership continues to flourish, we therefore call upon you today to uphold fundamental European values and issue a clear and unambiguous statement. You not only owe it to the descendants of the victims of the genocide, but are also obliged to do so in light of your own history and as a duty to Turkish civil society – regardless of ethnicity. Because ultimately, this is about closing the final chapter of the actual crime in order to usher in a peaceful Turkey of the future that is free, diverse and without fear.

**Translated by Patrick Breen**

# Pakistani Citizen Detained for Illegally Crossing Armenia-Turkey Border

YEREVAN -- The officers of Armenia Border Protection Department of the Federal Security Service of the Russian Federation have detained a person who illegally crossed the Armenian-Turkish border, press service of the said department informed Armenian News-NEWS.am.

According to the respective report, the border guards of the border detachment in Artashat town—in Ararat Province—had received information, over the weekend from the local residents working along the banks of the Araks River, that an unidentified person was walking toward Armenia from the border with Turkey.

He was detained in Araksavan town in Ararat Province, and handed over to the Russian border guards.

During the preliminary questioning, the detainee said he is a Pakistani citizen born in 1998, and that he wanted to reach Europe via Armenia.

On the same day, the border trespasser was handed over to the officers of the National Security Service of Armenia, who are checking out his identity and looking into the circumstances behind this offense.

# Azerbaijani Armed Forces Atrocities Presented to CoE Secretary General



STRASBOURG — The Human Rights Defender of the Republic of Armenia Arman Tatoyan met on May 12 with Secretary General of the Council of Europe Thorbjørn Jagland in Strasbourg.

Tatoyan presented to the Secretary General the atrocities committed by Azerbaijani Armed Forces and has transmitted the gross human rights violations committed against the civilian population of the Republic of Nagorno Karabakh as a result of Azerbaijani aggression initiated in the beginning of the of April.

During the meeting the Defender presented to Thorbjørn Jagland specific examples of atrocities committed by Azerbaijani armed forces. He also handed to the Secretary General the published Report of NKR Human Rights Defender which analyzes those cases of atrocities.

Tatoyan underlined the devastating consequences of Azerbaijani aggressive policy of disseminating hatred and violence towards people of Armenian ethnicity which endangers the Council of Europe human rights protection system. Moreover, the Defender noted that such policy is being encouraged at state level and is of an absolutely intolerant nature.

It has been recorded that human rights violations are unacceptable under any circumstances, human rights protection cannot be limited by politics or to the borders.

The parties emphasized the role of the Human Rights Defender (Ombudsman) in implementing the European standards in the country. More specifically, the importance of the Ombudsman institute in executing the European Court of Human Rights judgments has been emphasized. The parties have also discussed the issues related to prevention of domestic violence, protection of the rights of people with disabilities, as well as other issues in the field of human rights protection, reads the statement.

# Armenian Parliament Withholds Debate On Karabakh Recognition Bill

YEREVAN (Armenianow) -- A key committee in Armenia's National Assembly on Monday did not give its approval to a bill co-authored by opposition lawmakers Zaruhi Postanjyan and Hrant Bagratyan that would commit Armenia to formally recognizing the independence of Nagorno Karabakh.

The discussion of the bill that was referred to the National Assembly from the government on May 5 comes weeks after hostilities in the Armenian-Azerbaijani conflict zone during which President Serzh Sarkisian, the leader of the majority Republican Party of Armenia (RPA), warned Baku that Yerevan would consider recognizing Karabakh should the armed clashes escalate into a full-blown war.

Azerbaijan responded by stating that the passage of such a bill in Armenia would mean an end to the internationally mediated negotiations on the status of Karabakh and would therefore entail a new war. Officials in Moscow also discouraged Yerevan from taking the step.

A majority of RPA members and representatives of other opposition factions in the Armenian parliament today called into question the prudence of passing a Karabakh recognition bill now, but they consider the potentiality of the move to be itself a major deterrence against a new Azerbaijani offensive.

Postanjyan, Bagratyan and several other lawmakers, on the contrary, believe that only Karabakh's formal recognition will provide more security guarantees against Baku's designs to resolve the conflict militarily.

After discussions at the National Assembly Foreign Relations Committee, most of the Committee members, both pro-government and opposition representatives, opted out of the ballots on whether to approve the bill and include it in the parliament agenda. In the first ballot only one member voted "for" endorsing the bill, and one voted "against" it. In the second ballot, with only "for" votes from Dashnaktsutyun and Heritage members, Committee Chairman Artak Zakharyan declared that the bill will not be put on the parliament's agenda.

www.massisweekly.com
Updated every Friday

# ADL CEO: What Happened to the Armenian People Was Unequivocally Genocide

**By Jonathan Green-blatt**
**CEO of the Anti-Defamation League**



As the still fairly new CEO of the Anti-Defamation League (ADL), I've been on the job less than one year. I'm frequently asked about our current position on historical League decisions. One of those crucial questions is where ADL stands with regards to recognition of the Armenian Genocide.

My family was directly impacted by the Holocaust. Given that profoundly personal experience, I appreciate the pain of those who suffered losses even generations ago and the need to remember. I am reminded daily that we must educate and take action against hate in our own time, as we vow "never again."

Therefore, only a few weeks after the 101st commemoration of the tragedy, and on the occasion of Yom HaShoah, the remembrance of the Holocaust, I am using this opportunity to make our position clear.

ADL is a 103-year-old organization and very proud of both its history and its mission to not only lead the charge combatting anti-Semitism, but to also fight against all forms of bigotry. We recognize and uphold a connection between our leadership role to stand up for the Jewish community and stand up for other minority and marginalized communities at the same time.

Our mission reflects the words of the Jewish Sage Hillel from 2,000 years ago: "If I am not for myself, who will be? And, if I am only for myself what am I?"

That connection is both moral and practical: It is the right thing to do.

When we teach about the Holocaust, we speak about the 2,000-year history of anti-Semitism that made the Shoah possible.

We have a similar responsibility to talk more broadly and recall that in our own lifetime the world did not stand up against the horrors happening in Cambodia, Bosnia and Rwanda. Too often, the response to genocide has been global silence.

So, let me be crystal clear: the first genocide of the 20th century is no different. What happened in the Ottoman Empire to the Armenians beginning in 1915 was genocide. The genocide began with the ruling government arresting and executing several hundred Armenian intellectuals. After that, Armenian families were removed from their homes and sent on death marches. The Armenian people were subjected to deportation, expropriation, abduction, torture, massacre and starvation.

What happened to the Armenian people was unequivocally genocide.

We believe that remembering and educating about any genocide – Armenian, the Holocaust, Bosnia, Rwanda, and others is a necessary tool to prevent future tragedies.

Our experience regarding the Holocaust is relevant. When the first pictures of Auschwitz appeared at the end of World War II, there was wide-spread shame in the Western world at the realization that anti-Semitism was deeply embedded across cultures and countries and could produce such horror. That collective shame helped to inhibit manifestations of anti-Semitism for decades. Now, as time moves on, as that sense of shame eviscerates, it is no accident that anti-Semitism has reemerged with full force. In other words, we must educate each generation about the tragedies of the past.

That is why I am speaking out today and why we would support U.S. recognition of the Armenian Genocide. Silence is not an option.

In many ways, we have made great strides in this country fighting bigotry. Consider the great gains of the civil rights movement; the diminution of anti-Semitism that limited Jewish life in America; the ascendance of the Latino community; the revolution in attitudes and laws impacting the LGBT community. There have been setbacks and there is still tremendous work to be done, as exemplified by the stereotypes regarding Latinos and immigrants as well as anti-Muslim rhetoric that has characterized this unusual presidential campaign.

Collectively, this background makes it imperative for groups who, sadly, share a history of oppression to stand together. When individuals or groups deny the Armenian genocide, as recently took place with a billboard in Boston, ADL will speak out and denounce that denial. In that spirit, I am optimistic about greater cooperation going forward to end all forms of hate and bigotry.

# Cafesjian Center for the Arts Announces the Opening of the Relief "Sasuntsi Davit"



YEREVAN (Armradio) -- The Cafesjian Center for the Arts (CCA) announces the opening of the relief Sasuntsi Davit by sculptor Artashes Hovsepyan, which is an integral part of the architectural heritage of the Cascade complex.

In the 1980s, when the Cascade was being constructed, architect Jim Torosyan (1926-2014) invited the sculptor Artashes Hovsepyan to design one of the galleries in the future complex and the artist worked for four years in the hall which is now called Sasuntsi Davit Gallery. The multi-figure composition, depicting more than thirty episodes from the Armenian epos, is the sculptural version of the famous graphic work (Sasuntsi Davit, 1922) by renowned Armenian artist Hakob Kojoyan (1883-1959). Following the destructive earthquake of 1988 and the collapse of the Soviet Union, this tufa relief remains unfinished, yet it conveys in stone a monumental resonance inherent in Kojoyan's original work as interpreted by the sculptor Hovsepyan.

The Cafesjian Center for the Arts, in keeping with its mission, works not only to present the best of Armenian and international fine art, but also to preserve and celebrate the artistic and architectural heritage of the Cascade complex.

"By presenting the Sasuntsi Davit relief the Center celebrates a major work in the extraordinary career of Artashes Hovsepyan while noting the 85th birthday anniversary of the maestro. This important work, related to Armenia's story as a nation, will remain available for public viewing without an admission charge. This year of 2016 is marked by the 25th anniversary of the independence of the Republic of Armenia and the character of Sasuntsi Davit has always been and remains a source of inspiration and strength for the Armenian people. In this context the presentation of the Sasuntsi Davit relief reminds us of Armenia's endurance as a civilization," stated Vahagn Marabyan, the Acting Executive Director of the Cafesjian Center for the Arts.

The private preview of the relief Sasuntsi Davit will take place on May 18. The public opening of the relief will take place on May 21, 2016 as part of the Museum Night annual event.

# Armenia, Azerbaijan Pledge To Honor Ceasefire

**Continued from page 1**

prevent fresh fighting there.

Sarkisian said at the same time that he is largely "satisfied" with his talks with Aliyev. "The president of Azerbaijan assured that his country and he personally does not aim to solve any issue through hostilities," he told Armenia's leading TV channels while flying back to Yerevan. "That is good but it gives us little faith because there have been many conversations before but the fact is that agreements have not been honored [by Azerbaijan] for several years."

"But we cannot be guided only by our presumptions and predictions because war is not the best solution," said Sarkisian. "So we will see how events develop."

"We should not pay too much attention to those agreements considering our past experience," cautioned Sarkisian. "We have had 20 meetings [with Aliyev.] We agreed on many things during those meetings. But on his return to Baku the president of Azerbaijan made totally different statements. Time will tell how events develop this time around."

"The important thing for us is the following: the [U.S., Russian and French] co-chairs should once again see that our aim is not to maintain the status quo and wage a perpetual war," he added.

Even so, the Armenian leader was hopeful that ceasefire violations will now decrease. "I don't think that they will end starting from tomorrow," he said. "But I hope that things will be much calmer than they have been until now."

# Armenia Fund Raises $1.1 Million

**Continued from page 1**

withstood a massive military aggression of the Azeri armed forces along the entire border with Artsakh in early April.

"Given the situation in Artsakh, this Telethon was organized to solely provide short term humanitarian relief to the victims of war. Artsakh's needs are immense ranging from immediate medical care for the wounded to rebuilding destroyed housing and infrastructure. I want to thank all Armenians for their wholehearted support of Artsakh," said Sarkis Kotanjian, Executive Director of Armenia Fund, U.S. Western Region.

Representatives from the greater Armenian-American community and prominent members of Congress and government appealed during the Telethon, voicing their strong support for Artsakh.

For the last quarter century Armenia Fund has been uniting the global Armenian community for the development of Armenia and Artsakh resulting in more than $350 million in large scale humanitarian relief and infrastructure development.

# Armenian Society of Los Angeles Elects NewW Board of Trustees



GLENDALE -- The Electoral General Assembly of the Armenian Society of Los Angeles convened on Saturday, April 2, 2016 at the headquarters of the society in Glendale, California. "The General Assembly made a thorough evaluation of the activities of the Board of Trustees during its last term of office, and subsequently adopted an assessment resolution as "excellent".

At the conclusion of its session, the General Assembly elected three new members, replacing those whose term of office was expired, for the 2016-2018 term of office.

During its first meeting, the new Board of Trustees elected its steering committee. The new Board of Trustees of the Armenian Society of Los Angeles is comprised of the following members:

Dr. Vaughn Gregor – Chairman

Dr. Agop Aintablian – Vice-Chairman

Mr. Eric Ovanessian – Treasurer

Dr. Robert Bamban – Secretary

Albert Abkarian Esq. _Executive committee Liaison

Mr. Caro Minas – Advisor

Mr.Tomik Alexanian – Chief Operating Officer

# SAS Best Dissertation Award and Best Conference Paper Award



FRESNO — The Society for Armenian Studies (SAS) announces that Dr. Shushan Karapetian has been chosen to receive the SAS Distinguished Dissertation Award for 2011-2014 for her dissertation "'How Do I Teach My Kids My Broken Armenian?"': A Study of Eastern Armenian Heritage Language Speakers in Los Angeles." The SAS Award is accompanied by a $1,000 prize.

The selection committee had this to say about Dr. Karapetian's dissertation: "The committee found the dissertation to be timely and well researched and a welcome addition to the body of knowledge. In its examination of Armenian as a heritage language it addresses an issue of great contemporary relevance through solid scholarship, and it stands a valuable contribution to an under-analyzed topic."

Shushan Karapetian received a PhD in Near Eastern Languages and Cultures from UCLA in 2014, where she has taught Armenian Studies courses over the past six years. This year she began her tenure as the first Postdoctoral Fellow in the UCLA Armenian Studies Program, which entails the expansion of her research on Armenian heritage speakers and the development and instruction of an entirely new course entitled Language in Diaspora: Armenian as a Heritage Language. H er research interests focus on heritage languages and speakers, particularly on the case of Armenian heritage speakers in the Los Angeles community, on which she has presented and lectured widely. She is currently serving on multiple committees in the Los Angeles Armenian community aimed at reforming Armenian language instruction and promoting the use of the Armenian language.

The SAS chose Dr. Sona Haroutyunian's dissertation, "An Analysis of Dante's Tenses in the Armenian Translations of the Divina Commedia," for honorable mention. Dr. Haroutyunian is professor of Armenian language and literature at Ca ' Foscari University of Venice.

Vahe Sahakyan was named as the recipient of the graduate student SAS Best Conference Paper, for his work "From Extra-Territorial Communitarianism to Ethno-Territorial Nationalism Emergence of Armenian Revolutionary Parties in the 19th Century." Sahakyan is a graduate student in the Department of Near Eastern Studies at the University of Michigan, Ann Arbor. The SAS Best Conference Paper award is accompanied by a $500 prize.

The Society for Armenian Studies (SAS), founded in 1974, is the international professional association representing scholars and teachers in the field of Armenian Studies. The aim of the SAS is to promote the study of Armenian culture and society, including history, language, literature, and social, political, and economic questions.

The SAS publishes the peer-review Journal of the Society for Armenian Studies and published a semi-annual Newsletter and organizes panels and conferences on Armenian Studies.

SAS is headquartered at the Armenian Studies Program at California State University, Fresno and its website can be found at societyforarmenianstudies.com.

# Ararat Home to Honor Mothers, Grandmothers and Great-Grandmothers

MISSION HILLS -- Ararat Home of Los Angeles will honor the mothers among its residents with an afternoon of dance, music and poetry on May 22nd. T he program will be made possible with the participation of Hamazkayin Sayat Nova Choir, led by pianist Nora Roumian-Bairmian, and Hamazkayin Valley "Paruyr Sevak" Chapter "Niairi" Dance Group, under the artistic direction of Catherine Hairabedian and Ari Libaridian. A gifted young performer, Hayk Davtyan, will enchant guests with his *duduk*, and four talented Ararat Home residents and staff will enrich the program with piano and *kanon* music as well as poetry recitation. The event will be open to the public with free admission and will take place on Sunday, May 22, at 2:00 p.m. in Deukmejian Grand Ballroom at 15105 Mission Hills Road, Mission Hills.

For more information, please call (818) 365-3000.

# Screening of Parajanov's "Shadows of Forgotten Ancestors"




GLENDALE – Abril Bookstore's Armenian Film Society will present a screening of Sergei Parajanov's classic film Shadows of Forgotten Ancestors on Friday, June 3, 2016 at 7:30pm at Abril Bookstore – 415 E. Broadway, Glendale, CA. Admission is free.

Shadows of Our Forgotten Ancestors stunned world audiences in 1964. It is popularly known as the Romeo and Juliet of the Carpathians. The film is set among the Hutsul people of the Western Ukraine, an isolated ethnic group who live in the upper reaches of the mountain range. Their lives take place within a harsh environment and an ornate cultural system little changed since the 18th century.

Sergei Parajanov was born in Georgia to Armenian parents. After studying film and music, Parajanov became an assistant director at the Dovzhenko studios in Kiev. In 1964 he made Shadows of Forgotten Ancestors. He followed this up with the even more innovative The Color of Pomegranates (1969) which explored the art and poetry of his native Armenia in a series of stunningly beautiful tableaux, but by this stage the authorities had had enough, and Paradjanov spent most of the 1970s in prison on charges of "homosexuality and illegal trafficking in religious icons". However, with the coming of perestroika, he was able to make two further films before succumbing to cancer in 1990.

Presented by The Armenian Film Foundation and Abril Bookstore.

# Bundestag Motion Calls on Univocal Acknowledgement

**Continued from page 1**

ment of the German Empire's involvement in the Armenian Genocide with relative demands presented to the German government.

"The German Bundestag apologizes to Armenian women and men for the complicity of the German Empire to the Genocide," the resolutions states.

The bill also sets out a number of practical steps and instructions to the German government aimed at improving Armenian-Turkish relations, including information about the Armenian Genocide into German textbooks and organizing certain cultural events.

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

# ՊՈՅՔՈԹԵՆՔ ԹՐՔԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*ՎԱՐԴԳԷՍ ԳՈՒՐՈՒԵԱՆ*

*Հայկական նպարատուներն ու այլ հագուստեղէնի խանութները ողողուած են թրքական արտադրութիւններով: Եւ որո՞նք են թրքական արտադրութիւններու գլխաւոր յաճախորդները - մենք, հայերս: Անշուշտ ամերիկեան խանութներուն մէջն ալ շատ են թրքական արտադրութիւնները, սակայն ամերիկացիին համար թրքական կամ չինական կամ ֆիլիփինեան ապրանքներուն մէջ տարբերութիւն չկայ: Կարեւորը որակաւոր եւ քիչ մը աժան ըլլայ, հարցը կը լուծուի:*

*Եթէ չեմ սխալիր, կարծեմ ասկէ 101 տարիներ առաջ, եւ երկարած յաջորդ հինգ տարիներուն վրայ, Թուրք կոչուող ազգը աւելի քան մէկ ու կէս միլիոն հայ ջարդեց: Պատմական իրողութիւն մը որ հայերը ամէն տարի, գէթ Ապրիլ 24-ին, կը յիշեն եւ ոմանք եկեղեցիներու մէջ, ուրիշներ հրապարակային, ժողովրդական հաւաքներով կ՚ոգեկոչեն, մինչ ուրիշ շատ-շատերն ալ տունը, հեռատեսիլին առջեւ նստած կամ իրենց խանութներուն մէջ, «հոգիով» կը մասնակցին յարգանքի միջոցառումներուն ... : Ապրիլ 25-ին արդէն ամէն ինչ մոռցուած է, բացի հայկական թերթերու մէջ, Ապրիլ 24-ի առիթով չհրատարակուած յօդուածներու երեւումէն:*

*Ինչպէ՞ս կրնանք այսքան անտարբեր ըլլալ մեր ազգին ամենաողբերգական դէպքերուն հանդէպ: Մեզմէ իւրաքանչիւրը ընտանեկան անդամ մը ունի զոհուած այդ ահաւոր Եղեռնին ժամանակ: Ոմանց ամբողջ ընտանիքը, գերդաստանը, ամենավայրագ կերպով խողխողուած է ու մորթուած: Եւ մե՞նք, հանգիստ նստած մեր տուներուն մէջ, խոհանոցի պահարանները կը լեցնենք թրքական արտադրութիւններով:*

*Երեւանէն մինչեւ Պէյրութ, Նիւ Եորքէն մինչեւ Լոս Անճելըս, Սան Ֆրանսիսքօ, Թորոնթօ եւ Մոնթրէալ, հայկական նպարատուները լեցուն են թրքական արտադրութիւններով - լոլիկի ջուր, պիպէրի ջուր, ոսպ ու պլղուր, չորցած պտուղի եւ բանջարեղէնի տեսակներ, ձիթապտուղ եւ պանիր, անուշեղէն եւ պղպեղի ու համեմունքներու տեսակներ, եւ տակաւին շարքը կ՚երկարի: Եւ որո՞նք եւ այս արտադրութիւնները մեծաքանակ ներածողները - հայերը, որո՞նք են իրենց նպարատուներուն մէջ թրքածին արտադրութիւնները ծախողները - հայ նպարավաճառները, իսկ որո՞նք են յափշտակողները այս արիւնահոտ ապրանքները - մենք, «հայ» կոչուածներս:*

*Բազմաթիւ անգամներ, մանաւանդ Ապրիլ 24-ի հանդիսութիւններուն, մաքուր հայեր թերթիկներ կը բաժնեն որպէսզի «պոյքոթի ենթարկենք» թրքական արտադրութիւնները: Եւ ի՞նչ կ՚ըլլայ այդ թերթիկները ստացող «հայ»երուն հակազդեցութիւնը. թերթիկը կը ճմռթկեն ու կը նետեն: Նոյն օրը կամ յաջորդ օրը դարձեալ նպարատունէ մը թրքական ապրանք կը գնեն:*

*Ամերիկայի մէջ եթէ ափրիկեան ծագումով ամերիկացիներուն մազին դպչող ըլլայ կամ իրենց դէմ իրաւացի թէ անիրաւ արտայայտութիւնները ունենայ ընկերութիւն մը, կամ անիրաւութիւն մը ընէ իրենց դէմ, եւ եթէ իրենց առաջնորդներէն մին առաջարկէ որ այդ ընկերութեան արտադրութիւնները պոյքոթի ենթարկեն, ափրիկեան ծագումով ամերիկացիներուն ինիսուն տոկոսը կը հետեւին այդ պոյքոթին եւ ընկերութիւնը ծունկի կը բերեն: Իսկ մե՞նք, այսպէս կոչուած «հայ»ե՞րս, թրքական արտադրութիւններուն դէմ առաջարկուած պոյքոթները պարզապէս կ՚անտեսենք: «Ո՞վ է այդ մարդը որ պիտի որոշէ ես ի՞նչ տեսակ ապրանք պիտի գնեմ» խօսքը ամենայն անպատասխանատուութեամբ կ՚արտաբերենք: Տեսա՞ք ինչ զարգացած, յառաջդիմած, ազատութիւնը սիրող ազգ ենք մենք: Տեսաք ինչ խելացի եւ ինքնուրոյն անհատներ ենք մենք: Չէ՞ որ մեր նահատակները, մեր ֆէտայիները զոհուեցան ազատութեան համար, հիմա ինչո՞ւ կ՚ուզեք մեր ազատութիւնը կաշկանդել ... Ափրիկեան ծագումով Ամերիկացիներու չափ ալ չկանք տակաւին: Երբ թրքական ապրանքներ ներածող հայ վաճառականի մը ըսինք որ ինչո՞ւ թրքական ապրանք կը ներածէ, «այդ ձեր գիտնալիք գործը չէ: Մենք կը ներածենք ինչ որ շահաբեր է մեզի համար» ըսին ...:*

*Վա՜յ քեզ ժողովուրդ:*

*Ինծի համար զարմանալի եւ անհասկնալի է որ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս Հայաստանցի վաճառականները Հայաստանի համար թրքական ապրանք կը ներածեն: Սահմանները գոց են, ուրեմն Վրաստանի վրայով այդ ապրանքները Հայաստան կը հասնին: Ո՞ւր են Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնները: Ինչո՞ւ այդ թրքական ապօրինի ապրանքներուն ներածումը կ՚արտօնուի: Հա՜ա՜, իշխանաւորներն ալ շահաբաժին ունին ներածուող ապրանքներուն մէջ...: Տակաւին, Երեւանի կարգ մը նպարատուներու ցուցափեղկերուն վրայ «Թուրքական Ապրանք»ներու թարմութեան մասին գովազդ կ՚ըլլայ: Ա՞յս է հայերուս հայրենասիրութիւնը, եթէ ոչ պարզապէս պիտի ըսենք՝ թրքասիրութիւնը:*

*Կը գանգատինք որ Հայաստանէն արտագաղթ կայ: Եթէ հայերս մերժենք թրքական արտադրութիւնները գնել, եւ որոշենք նմանօրինակ հայկական ապրանքներ գնել, կրնա՞ք ճշդել այն շահը որ Հայաստանը կ՚ունենայ: Կրնա՞ք գիտնալ թէ քանի՜ հազար հայեր գործի պիտի լծուին Հայաստանի մէջ եւ ինչ հարստութիւն պիտի կուտակուի: Հոգ չէ թէ «մեծահարուստները» աւելի եւս պիտի օգտուին, բայց հազարաւոր հայեր գործ պիտի ունենան - գիւղացիները՝ ցանելով, շարժավարները՝ փոխադրելով, ապակեգործարանի բանուորները՝ շիշերը շինելով, հարիւրաւորներ՝ գործարաններուն մէջ աշխատելով, շարունակեն:*

*Արցախի քառօրեայ պատերազմը ցոյց տուաւ որ ազերիներն ու թուրքերը երբե՛ք պիտի չհանգստանան մինչեւ որ հայն ու Հայաստանը չստրկացնեն, չոչնչացնեն (անշուշտ մենք վստահ ենք որ օրթոտոքս Ռուսիան, քրիստոնեայ Եւրոպան եւ բողոքական Ամերիկան պիտի պաշտպանեն մեզ ... ): Ամէն անգամ որ թրքական ապրանք կը գնենք, օգնած կ՚ըլլանք թրքական տնտեսութեան եւ նաեւ օգնած կ՚ըլլանք որ անոնք փամփուշտ մը եւս ձուլեն եւ մեր արցախցի կամ հայաստանցի եղբայրներուն սիրտը ծակեն: Գիտե՞ս բարեկամ, այն փամփուշտը որ մեր հայ պատանիին սիրտը խոցեց, քու գնած լոլիկի ջուրի շիշէն եկած շահէն չէր, այլ դրացիիդ գնած պիպէրի ջուրի շիշէն եկած շահէն, այնպէս որ դուն կրնաս հանգիստ քնանալ:*

*Երբ այդ թրքական լոլիկի ջուրը կ՚ուտենք, արդեօք այդ կարմրութեան մէջ չե՞նք տեսներ մեր սուրբ նահատակներուն կարմիր արիւնը: Ի՞նչ խիղճով կը խմենք մեր անմեղ մեծ հայրերուն եւ մեծ մայրերուն արիւնը: Ո՞ւր է մեր անձնական արժանապատուութիւնը: Զե՞նք ամչնար: Ամօթ կոչուած զգացումը չու՞նինք: Այսքա՞ն է մեր հայասիրութիւնը: Այսպէ՞ս պիտի յարգէինք յիշատակը մեր մէկ ու կէս միլիոն նահատակներուն, մեր նորօրեայ հերոս նահատակներուն:*

*ԱՄՕԹ է:*

*Ես այս առիթով կոչ կ՚ուղղեմ թրքական մեծաքանակ ապրանք ներածող վաճառականներուն որպէսզի անմիջապէս դադրին թրքական ապրանք ներածելէն: Թող իրենց պահեստներու ապրանքները սպա-*

Շար.ը էջ 18






## ՃԱԿԱՏԱԳՐԻ ԿԱՐՄԻՐ ԹԵԼԻ ՄԱՍԻՆ ՃԱՓՈՆԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼԸ

*Հին ժամանակներէն մարդոց կը յուզէ կեանքի իմաստին հետ կապուած հարցը: Այդ որոնումներուն իբրեւ արդիւնք՝ ի յայտ եկած են բազմաթիւ ժողովրդական առասպելներ եւ փիլիսոփայական ուղղութիւններ, որոնցմէ մէկը կարմիր թելերու մասին պատմող ճափոնական առասպելն է, որ մեր կեանքի իրադարձութիւնը կը բացատրէ շատ ռոմանթիկ եւ իրատեսական կերպով:*

*Փակեցէք աչքերը եւ պատկերացուցէք, որ ձեր ամբողջ մարմնին մէջէն կը հոսի արիւնը, որ հոսելով ձեր անվերջանալի արիւնատար անօթներէն եւ երակներէն, կը հասնի մարմնի բոլոր անկիւնները եւ կեանք կը պարգեւէ ձեզի: Այդ անթիւ ու անհամար արիւնատար ճանապարհներուն մէջ գոյութիւն ունի իւրայատուկ անօթ մը՝ սիրտէն մինչեւ ճկոյթ հասնող: Անոնք կապուած են շնորհիւ արմուկի զարկերակին: Ճկոյթը սրտի իսկական «ներկայացուցիչն է», այդ իսկ պատճառով է, որ շատ մշակոյթներու մէջ անիկա կ'օգտագործուի համաձայնելու, խոստում տալու եւ նմանատիպ գործողութիւններու համար:*

*Այսպէս, համաձայն ճափոնական առասպելին, այդ կապը՝ սիրտէն մինչեւ ամենափոքր մատը, չի վերջանար ճկոյթով:*

*Ճկոյթէն դուրս կ'ելլէ անտեսանելի կարմիր թելը, որ վերջնական եւ ամուր կը կապէ ձեզ այլ մարդոց թելերուն հետ, այսինքն անոնց սիրտին հետ:*

*Անոնք, որոնք կապուած են այդ թելերով՝ իրարու կապուած են ճակատագիրով: Անկախ ժամանակէն, տեղէն եւ իրադարձութենէն, անոնց նախասահմանուած է հանդիպիլ, համաշխարհային իմաստով ազդել իրարու կեանքի վրայ: Կեանքի ընթացքին այդ թելը կրնայ երկարիլ կամ քարանալ՝ դժուարեցնելով հանդիպումը կամ աւելի հեռացնելով իրարու հետ կապուած մարդիկ: Բայց անիկա երբեք չի կտրուիր:*

*Այդ կեանքի եւ յարաբերութիւններու կապը ծնունդ տուած է ամբողջականութեան փիլիսոփայութեան, որ կը պնդէ, որ ձեր կեանքի ուժը կը տարածուի ձեր մարմինէն դուրս եւ կը կապէ ձեզ Տիեզերքի եւ անոր ուժին հետ: Կարմիր թելը՝ իրար իբրեւ մէկ ամբողջի մաս, տիեզերքի մէկ մաս հասկնալու եւ ընկալելու տարբերակն է:*

*Պատահական չէ, որ մենք յաճախ կը մտածենք, որ այս կամ այն մարդը ի զուր չէ, որ կայ մեր կեանքին մէջ: Եւ մենք՝ մեր կարգին՝ զուր չէ, որ կը յայտնուինք ուրիշի կեանքին մէջ:*

*Մեր թելը կ'որոշէ մեր ճակատագիրը, ատիկա մեր գծանշուած ճանապարհն է, որ մեզ կը տանի անոնց մօտ, որոնց մենք առաւել շատ պէտք ենք, չնայած մենք չենք գիտակցիր այդ մասին մեր ամբողջ կեանքի ընթացքին: Ճափոնացիները դարեր շարունակ հաւատացած են, որ ոչինչ պատահական է այս դժուար կեանքին մէջ:*

## ԱՐՄԱՒԻ ՕԳՏԱԿԱՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*Իգուր չէ, որ շատ ժողովուրդներու համար արմաւը կը համարուի սուրբ ուտելիք: Անոնց փոքր քանակը ոչ միայն կը կշտացնէ, այլ նաեւ մարմնին կը պարգեւէ անհամար քանակութեամբ օգուտներ:*

*Օրական ուտելով ընդամէնը 3 արմաւ, մարմնին կ'ապահովէք գրեթէ բոլոր պիտանի տարրերը: Շատ բժիշկներ խորհուրդ կու տան համեղ եւ օգտակար արմաւով փոխարինել վնասակար քաղցրեղէնները:*

*Արմաւի օգտակարութիւնները՝*

*1. Մաքուր անօթներ. Արմաւը ունի մեծ չափով կալիում: Անիկա ոչ միայն կ'օգնէ սրտի բնականոն աշխատանքին, այլեւ կ'օժանդակէ մաքրելու աղտոտած անօթները: Անիկա իր հերթին կ'օգնէ խուսափելու սրտի հիւանդութիւններէն:*

*2. Առողջ լեարդ. Արմաւը կ'օգնէ մաքրելու լեարդը թոյներէն, կ'իջեցնէ ցերոզի հաւանականութիւնը:*

*3. Լաւ տեսողութիւն. Արմաւը աւելի լաւ կ'ազդէ տեսողութեան վրայ, քան ստեպղինը, քանի որ անիկա ունի աւելի մեծ քանակութեամբ վիթամին A:*

*4. Առոյգութիւն. Եթէ կը փափաքիք առոյգ եւ ուժեղ զգալ, անհրաժեշտ է արմաւ ուտել: Ընդամէնը 3 հատիկը բաւարար ուժ կու տայ ամբողջ օրուան համար:*

*5. Նիւթափոխանակութիւն. Արմաւը հիանալի սնունդ է նիւթափոխանակութեան համար, անիկա օգտակար է ստամոքսի խանգարումներուն ժամանակ: Այս ուտելիքը շատ կարեւոր է աղեստամոքսային համակարգի հիւանդութիւններու եւ նոյնիսկ՝ ստամոքսի քաղցկեղի ժամանակ:*

*6. Գեղեցկութեան համար. Բարակ մազերու, չոր մորթի, կնճիռներու, ճաքճքած շրթունքներու պարագային պէտք է ուտել արմաւ:*

*Աւելի լաւ է ընտրել կորիզով, մուգ եւ կնճռոտ արմաւը: Անիկա պէտք է ըլլայ ամբողջական, փափուկ եւ անփայլ:*

## ՀԱՃԵԼԻ ՄԱՐԴՈՑ ՏԱՍԸ ԿԱՆՈՆ

*Սովորութիւններ, որոնց շնորհիւ կարգ մը մարդիկ հաճելի կը թուին բոլորին, կամ դիւրութեամբ կրնան նուաճել բոլորին համակրանքը.*

*-Կը ստեղծեն դրական տրամադրուածութիւն, որմով կը վարակեն միւսները,*

*-Բարեհոգի են,*

*-Կարողութիւն ունին ուշադիր լսելու ուրիշները,*

*-Կը տիրապետեն իրենք իրենց,*

*- Կը պահպանեն հանգստութիւնը,*

*-Միշտ բաց են շփման համար եւ անկանխակալ են,*

*-Անոնց դէմքին միշտ ժպիտ կայ,*

*-Կրնան շատ չխօսիլ,*

*-Դանդաղ չեն,*

*-Կանոնաւոր կերպով բարեգործութեամբ կը զբաղին:*

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆՆԵՐՈՒ ԱՄԲՈՂՋ ՓՈՐՁԸ՝ 10 ՄԷՋԲԵՐՄԱՆ ՄԷՋ

*1. Այն մարդիկ, որոնք ձեզ տառապանք պատճառած են, նոյնքան վախցած էին, որքան դուք այժմ:*

*2. Մենք մեր համոզումները կը ձեւաւորենք դեռ մանուկ ժամանակ, իսկ յետոյ կը յառաջանանք կեանքի մէջ՝ վերստեղծելով այն իրավիճակները, որոնք կը համապատասխանեն մեր համոզումներուն:*

*3. Անցեալը ընդմիշտ հեռացած է: Ատիկա փաստ է, եւ ատոր դէմ ոչինչ կրնաս ընել: Սակայն կարելի է փոխել անցեալի վերաբերեալ միտքերը: Յիմարութիւն է, որ մենք մեզ ներկայիս պատժենք այն բանի համար, որ շատ կանուխ մէկը մեզ նեղացուցած է:*

*4. Մենք մեզի համար պէտք է ընտրութիւն ընենք. ազատել եւ ներել բոլորը առանց բացառութեան, յատկապէս՝ մենք մեզ: Զնայած չենք գիտեր՝ ինչպէս ներել, բայց պէտք է շատ ուզել:*

*5. Երբ մարդը կը հիւանդանայ, պէտք է իր սրտին մէջ փնտռէ, թէ որուն պէտք է ներէ:*

*6. Այն, ինչ կը մտածենք մեր մասին, մեզի համար իրականութիւն կը դառնայ: Մեր իւրաքանչիւր միտքը մեզի համար ապագայ կը ստեղծէ:*

*7. Ինքն իրեն հաւանութիւն տալը եւ ընդունիլը մեր կեանքին մէջ դրական տեղաշարժերու բանալին է:*

*8. Ինքզինք սիրել կը նշանակէ տօնել սեփական անձի գոյութեան փաստը եւ Աստուծոյ շնորհակալ ըլլալ կեանքի պարգեւին համար:*

*9. Այն ամէնը, որ կ'ընէք, ետ կը ստանաք:*

*10. Ուրիշը փոխելու համար անհրաժեշտ է նախ եւ առաջ փոխուիլ: Անհրաժեշտ է փոխել մեր միտքերուն ընթացքը:*

## ՎԱՏ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՆ 5 ԴՐԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ

*Ընդունիր տխրութիւնը եւ անիկա կը դադրի քեզ անհանգստացնելէ: Գիտնականները եւ հոգեբանները պարզած են, որ անոնք, որոնք հանգիստ կը վերաբերին բացասական զգացումներուն եւ կ'ընդունին զանոնք, աւելի քիչ կը տանջուին: Իսկ անոնք, որոնք կը ջղայնանան իրենց ընկճուածութեան պատճառով եւ կը փորձեն ազատիլ բացասականէն ամէն գնով, աւելի մեծ ուժերու կորուստ կը զգան:*

*Երբ մենք տխուր ենք, աւելի դժուար է խաբել մեզ. Որքան ալ զարմանալի է, բայց տխուր մարդոց ուղեղը աւելի լաւ կ'աշխատի, մասնաւորապէս, աւելի կը զօրանան վերլուծական կարողութիւնները: Եւ այս վիճակին մէջ անոնք աւելի լաւ կը բացայայտեն ստախօսները:*

*Լաւ լալը օգտակար է. Բժիշկները յաճախ կ'ըսեն՝ սիրտը արցունք կը թափէ:*

*Ատիկա կը նշանակէ, որ եթէ դուք կը պահէք արցունքները, կը սպաննէք ձեր «շարժիչ»ը: Բացի այդ, մարդոց մեծամասնութիւնը գիտէ, որ արցունքներէն յետոյ հոգին կը հանգստանայ, չնայած, որ իրավիճակը չի փոխուիր: Այդ պատճառով, հոգեբանները կը թելադրեն չպահել լացը: Տարբեր զգացումները կարեւոր են. Հոգեբանները պարզած են, որ մարդիկ, որոնց տրամադրութիւնը օրուան ընթացքին կը փոխուի տխուրէն ուրախի՝ աւելի ընկղմած կ'աշխատին: Ատիկա կը խօսի զգացմունքային փոփոխութեան կարեւորութեան մասին: Բացասական փորձը մարդիկ կը դրդէ գործողութիւններու եւ կը ստիպէ անոնց ըլլալ աւելի հաւաք:*

*Տխրութիւնը չ'ազդեր գիտակցութեան վրայ. Կարելի՞ է աշխատիլ վատ տրամադրութեամբ: Այո: Հոգեբանները պարզած են, որ վատ տրամադրութեամբ աշխատանքի գացող մարդիկ աւելի արդիւնաւէտ կ'աշխատին քան՝ անոնք, որոնք լաւ տրամադրութեամբ կ'աշխատին:*

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՂՋԿԱՅ ՀԱՄԱՐ ԻՆՉՈՒ ԴԺՈՒԱՐ Է ԱՄՈՒՍՆԱՆԱԼԸ

*1. Խնդիրներ հօր հետ յարաբերութիւններուն մէջ: Եթէ հօր հետ վատ յարաբերութիւններու նախաձեռնութիւնը աղջիկէն կու գայ, ատիկա կողմնակիօրէն կը մատնանշէ, որ աղջիկը ընդհանուր առմամբ քննադատական վերաբերմունք ունի մարդկութեան տղամարդկային կէսին հանդէպ:*

*2. Տան մէջ տղամարդկային ուժի գերակայութիւնը: Ասիկա կը նշանակէ, որ աղջիկը տղու պէս է… է'ւ արտաքինով, է'ւ մտածողութեամբ, բնաւորութեամբ, վարուելակերպով: Հաւանական փեսացուն, այս պարագային, ենթագիտակցաբար կը զգայ տղամարդկային ուժի տիրապետութիւնը եւ հեռու կը փախչի:*

*3. Ցած ինքնագնահատականը: Ամուսնութիւնը կրնայ ստրկութեան նման ըլլալ, իսկ ճակատագիրը բարեհաճ է եւ կը սպասէ աղջկայ անձին մէջ արմատական փոփոխութիւններու:*

*4. Բարձր ինքնագնահատական եւ ակնկալիքներ: Տարածուած տիպական դէպք է, երբ աղջիկը կը սպասէ սպիտակ ձիով արքայազնին: Ատիկա չափազանց փքուած կեղծ եսի արդիւնքն է, իր՝ սիրուած աղջկայ վերաբերեալ պատրանքային պատկերացման:*

*5. Ապականած կենսական արժէքներ: Ճակատագիրը իսկական նուէր նախապատրաստած է, բայց հասունացման ժամանակաշրջանին աղջիկը ինկած է վատ ընկերական շրջապատի կամ այլասերած հանրային կարծիքի բացասական ազդեցութեան տակ: Անհրաժեշտ է կենսական արժէքներու վերագնահատում կատարել եւ ամէն ինչ միանգամայն լաւ կ'ըլլայ:*



## Մամլոյ Ասուլիս Հայաստանի Հաւաքականի Լոս Անճելըս Այցելութեան Առթիւ



Նկարին մէջ, ձախէն աջ՝ հանդիսավար Ֆերնանտօ Փարամօ, Հիւկօ Պանտի, Թորոս Բարսեղեան և Յարութ Սասունեան

Չորեքշաբթի, Մայիս 3-ին, Carson City-ի StubHub գեղակառոյց մարզավայրին մէջ տեղի ունեցաւ մամլոյ ասուլիս մը, Հայաստանի Ֆութպոլի հաւաքականի Լոս Անճելըսի մէջ ունենալիք երկու միջազգային խաղերուն առթիւ:

Ասուլիսը բացուած յայտարարելէ և բարի գալուստ մաղթելէ ետք, Inter America-ի խօսնակ Ֆերնանտօ Փարամօն ըսաւ. «Շուտով Լոս Անճելըս կը ժամանէ Հայաստանի ֆութպոլի հաւաքական խումբը, մրցելու համար Կուաթեմալայի և Էլ Սալվատորի հաւաքականներուն հետ: Մենք անհամբերութեամբ կը սպասենք այդ օրուան, StubHub-ի այս գեղեցիկ խաղավայրին մէջ վայելելու համար բարձրորակ երկու մրցումներ»:

Անգլերէն ու սպաներէն իր կարճ ու զուսպ խօսքին մէջ, Inter America-ի նախագահ Հիւկօ Պանտին իր գոհունակութիւնը յայտնեց հայ և սպանական էլեկտրոնիկ և գրաւոր մամուլի թղթակիցներուն ներկայութեան համար, շեշտելով որ «Հայաստանի հաւաքականին և Կուաթեմալայի ու Էլ Սալվատորի խումբերուն միջեւ կայանալիք զոյգ մրցումները StubHub-ի այս գեղեցիկ մարզադաշտին վրայ, մարզասէրներուն մեծ բաւարարութիւն պիտի պատճառէ, որուն համար կը յայտնեմ իմ շնորհակալութիւնները»:

Խօսք տրուեցաւ Քարսըն Սիթիի քաղաքապետ Ալպերթ Ռոպլեսին: Ան հայերէնով «Բարի գալուստ» ըսելէ ետք, անգլերէնով շարունակեց. «Իմ սիրելի հայ բարեկամներ, ձեր բոլորին բարի գալուստ կը մաղթեմ: Քարսըն քաղաքը միշտ բաց է հայ համայնքի անդամներուն առջեւ: StubHub մարզավայրը թէեւ շատ հին չէ, բայց ունի հարուստ պատմութիւն: LA Galaxy-ի բնօրրանը եղող այս դաշտը հիւրընկալած է բազմաթիւ ֆութպոլի խումբեր: Այժմ հերթը եկած է ընդունելու Հայաստանի հաւաքական թիմը: Հայաստանի ազգային թիմին այցելութիւնը պատմական նշանակութիւն ու արժէք ունի մեզի համար: Մենք շատ-շատ ոգեւորուած ենք այս առթիւ, որովհետեւ մեր հայ բարեկամները, ինչպէս նաեւ սալվատորեան և կուաթեմալայեան բարեկամները առիթը պիտի ընծայեն մեզի վայելելու ֆութպոլի բարձրորակ մրցումներ այս վայրին մէջ: Մենք անհամբեր կը սպասենք միջազգային այդ մրցումներուն: Այս առթիւ, այդ բոլորին համար մեր ջերմ շնորհակալութիւնները կը յայտնենք ձեզի»:

Հանդիսավար Ֆերնանտօ Փարամօ, յիշեցնելէ ետք թէ Հայաստանի ազգային թիմը Քալիֆորնիա կու գայ իր նոր մարզիչին՝ Վարուժան Սուքիասեանի ղեկավարութեամբ, ըսաւ թէ հայկական ազգային խումբը վերջերս եւրոպական բաժակի մրցաշարքին գծով յաղթեց Պելառուսին և անցեալ Սեպտեմբերին 0-0 հաւասար դուրս եկաւ Տանիմարքայի դէմ:

ՖԻՖԱ-ի համբաւաւորներու ակումբի (Hall of Fame) անդամ Պր. Թորոս Բարսեղեան խօսք առնելով ըսաւ,- «Հաճոյք է այստեղ ներկայ ըլլալը՝ Հիւկոյի և Inter America-ի կողքին: Inter Americaն 1973-էն ի վեր առնչութիւն ունեցած է հայ համայնքին հետ, երբ «Արարատ»ը տիրացաւ Սովետական Միութեան ախոյեանութեան բաժակին: Inter America 1974-ին «Արարատ»ը բերաւ Քալիֆորնիա, Քալըսիումի մէջ մրցելու համար Մեքսիկոյի ախոյեան խումբին դէմ: «Արարատ» յաղթեց 1-0: Inter Americaն այսօր ալ նախաձեռնողն ու կազմակերպողն է Մայիս 28-ին և Յունիս 1-ին հայրենի ազգային խումբին և Կուաթեմալայի և Էլ-Սալվատորի ազգային խումբերուն միջեւ կայանալիք մրցումներուն: Ներկայիս, Հայաստանի ազգային խումբը իր մէջ ունի Հէնրիկ Մխիթարեանի նման խաղացող, որ աշխարհի 17 լաւագոյն խաղացողներու կարգին կը դասուի: Ինչպէս գիտենք, Հայկական ազգային խումբին վերջին մրցումը Քալըսիումի մէջ վերջ գտաւ 1-1 հաւասար արդիւնքով: Խիստ լարուած, մարտահրաւիրային և վիթխարի մրցում մըն էր: Մենք նոյնը կ'ակնկալենք նաեւ այս առթիւ: Գեղեցիկ, մակարդակով մրցում մը, որ իրարու պիտի մօտեցնէ Հայաստանը, Կուաթեմալան և Էլ Սալվատորը: Որովհետեւ Սաքըրը լաւագոյն միջոցն է ազգերը իրարու մօտեցնելու, իրարու բարեկամացնելու համար»:

Վերջին խօսողն էր "California Courier" շաբաթաթերթի հրատարակիչ-խմբագիր Յարութ Սասունեան: Ան դրուատեց և գոհունակութիւն յայտնեց, որ StubHub գեղակառոյց մարզավայրին մէջ տեղի պիտի ունենան հայրենի ազգային խումբին երկու մրցումները՝ Մայիս 28ին և Յունիս 1ին: «Մենք շատ ուրախ ենք,- շարունակեց ան, - որ Inter America-ի հետ միասին կազմակերպեցինք այս սքանչելի մրցումները: Վերջին օրերուն, շաբաթներուն և ամիսներուն, երբ ողբերգական իրադարձութիւններ մէկը միւսին կը յաջորդեն անկայուն աշխարհի

Շար.ը էջ 18

## ԼԻՍԱԲՈՆՈՒՄ ՀԱՅԵՐԻ ԳՈՐԾԱԾ «ԳՈՒՄ ԳԱՓՈՒ» ՀՌՉԱԿԱՒՈՐ ԳՈՐԳԵՐԸ ՀԱՄԱԴՐՎԵԼՈՒ ԵՆ ԱՎԱՆԳԱՐԴ ԱՐՎԵՍՏԻ ՀԵՏ



Իր հաւաքածոյով աշխարհի եզակի թանգարաններից մէկը համարուող Լիսաբոնի «Գալուստ Կիւլպենկեան» թանգարանը Յունիսի 29-ին իր գորգերի հաւաքածուից ցուցադրութեան է ներկայացնելու «Գում Գափու» հռչակաւոր գորգերը (Kum Kapi rugs), որոնցից երեքը «Գում Գափու» գորգի ամենայայտնի մասնագէտ Յակոբ Գափուճեանի (1870-1946) գործերն են:

Հնագոյն արեւելեան նախշազարդերով հիւսուած Օսմանեան կայսրութեան շրջանի «Գում Գափու» մետաքսեայ գորգերը կայսերական գանձարանների եւ պալատական հարստութիւնների մաս են կազմել, իսկ նրանց հիւսողներն աւանդաբար հայեր են եղել: Գալուստ Կիւլպենկեանի հաւաքածույում ցուցադրուելու են նաեւ հայ աղջիկների գործած նոյնանուն գորգեր: Այսօր էլ, աշխարհում «Գում Գափու» անունը կրող գորգի տարածման առթիւ նշւում է հայ վարպետ Յակոբ Գափուճեանի բերած աւանդոյթը:

Լիսաբոնի «Գալուստ Կիւլպենկեան» թանգարանում պահուող գորգերը միւս գանձերի հետ իր ամբողջ կեանքի ընթացքում հաւաքել է յայտնի գործարար Գալուստ Կիւլպենկեանը: Թանգարանում պահւում է 6,400 գործ, որոնց մէջ առանձնայատուկ տեղ ունեն ձեռագործ գորգերը: Կիւլպենկեանն իր բազում ճանապարհորդութիւնների ժամանակ արուեստի հանդէպ բացառիկ սիրոյ շնորհիւ գնել է գեղանկարչական գլուխգործոցներ (Ռուբէնս, Ռեմբրանդտ, Դիրկ Բոուտս եւ այլն), արեւմտաեւրոպական կահոյքի եւ 18-րդ դարի դեկորատիւ կիրառական առարկաներ, միջնադարեան ձեռագրեր, կովկասեան եւ պարսկական գորգեր, Ռընէ Լալիկի կողմից զարդարուած հաւաքա-ծուներ, հին Եգիպտոսի եւ Միջագետքի յուշարձաններ, կերամիկա, նաեւ՝ հայկական մշակութային գործեր: 6000 աւելի արուեստի նմուշներից թանգարանում մշտապէս ցուցադրւում է մօտ 1000-ը:

«Գում Գափու» գորգերը նոյնպէս համարւում են թանգարանի չցուցադրուած եւ այցելուներին ոչ այնքան յայտնի իրերից:

Յունիսի 29-ին նախատեսուած ցուցահանդէսն արդէն մեծ հետաքրքրութիւն է առաջացրել գորգարուեստի աշխարհում: Նրան անդրադարձել են մասնագիտացուած լրատուամիջոցներ, ինչպէս Hali-n եւ այլ ամսագրեր ու կայքեր: Նշւում է, որ անցնող դարերի նաւթային պաշարների հայ տիրակալի անունը կրող թանգարանում նրան պատկանած գորգերի առաջիկայ ցուցադրութիւնը ի յայտ է բերելու Գալուստ Կիւլպենկեանի կեանքի պատմութ-

Շար.ը էջ 18


ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)

* $50,00 * $100,00 (first class) for USA
$ 125,00 (Air Mail) for Canada.
$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: ---------------------------------------
Address: ---------------------------------------
City: --------- State:--------- Zip Code:------
Country: -------------
Tel :---------------------- Email: -------------------------

## ՀԵՆՐԻԽ ՄԽԻԹԱՐԵԱՆԸ՝ ՄՐՑԱՇՐՋԱՆԻ ԼԱՒԱԳՈՅՆ ՖՈՒՏՊՈԼԻՍՏ




Գերմանական DW բազմալեզու միջազգային գործակալութեան տարբեր երկրների ընթերցողների քուէարկութեամբ, Գերմանիայի անցնող մրցաշրջանի լաւագոյն ֆուտպոլիստ է ճանաչուել Դորտմունդի «Բորուսիայի» եւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը:

«Չկայ աւելի լաւ պարգեւ, քան ամբողջ աշխարհում իմ երկրպագուների այս գնահատականը: Մեծագոյն շնորհակալութիւն ինձ աջակցելու համար: Ես սիրում եմ ձեզ»,- Ֆէյսբուքում գրել է Մխիթարեանը:

27-ամեայ խաղացողը ստացել է ձայների 26 տոկոսը՝ յետ թողնելով Լեւերկուզենի «Բայերի» մեքսիկացի յարձակւող Խաւյեր Էրնանդեսին (21 տոկոս) եւ Միւնխենի «Բաւարիայի» լեհ յարձակուող Ռոբերտ Լեւանդովսկուն ու գերմանացի կիսապաշտպան Թոմաս Միւլերին (երկուսն էլ՝ 17 տոկոս):

## ՔՐԻՇՏԻԱՆՈՒ ՌՈՆԱԼԴՈՒԻ ՌԵԿՈՐԴԸ



Սպանիայի առաջնութեան վերջին տուրում Լա Կորունիայի «Դեպորտիվոյի» դարպասը երկու գոլ խփած Մադրիդի «Ռեալի» պորտուգալացի յարձակուող Կրիշտիանու Ռոնալդուն դարձաւ առաջին ֆուտբոլիստը, ում յաջողւում է 6-րդ մրցաշրջանն անընդմէջ ակումբի կազմում դառնալ 50-ից ոչ քիչ գոլի հեղինակ: Այս մրցաշրջանում 30-ամեայ ֆուտպոլիստը խփել է 51 գոլ (35-ը՝ Պրիմերայում, 15-ը՝ Չեմպիոնների լիգայում): Անցած մրցաշրջանում Ռոնալդուն խփել էր 61 կոլ, դրանից առաջ՝ 51, 2012-2013 թուականներին՝ 55, դրանից առաջ՝ 60 եւ 53:

Յիշեցնենք, որ Ռաֆայէլ Բենիտեսի գլխաւորութեամբ ձախողած առաջին շրջանից յետոյ «Ռեալը» Զիդանի ղեկավարութեամբ նուաճեց Սպանիայի փոխախոյեանի կոչումը՝ մէկ միաւոր զիջելով «Բարսելոնային»: Ախոյեանների լիգայի եզրափակիչում Արքայական ակումբը Մայիսի 28-ին կմրցի Սպանիայի առաջնութիւնում երրորդ տեղը գրաւած Մադրիդի «Աթլետիկոյի» հետ:

## ՊԵԼԷ. ՊՐԱԶԻԼԻԱՅԻ ՀԱՒԱՔԱԿԱՆԸ ԿՈՐՑՐԵԼ Է ԽԱՂԱՈՃԸ



Պրազիլիա - Գերմանիա հանդիպման ժամանակ ես արտասւում էի, յիշել էի ֆուտպոլի աշխարհի եռակի ախոյեան Պելէն՝ վերյիշելով 2014-ին Պրազիլիայում անցկացուած աշխարհի առաջնութեան կիսաեզրափակիչում Գերմանիայից 1:7 հաշուով կրած պարտութիւնը:

«Դժուար է վերյիշել այդ պահը: Ես արտասւում էի: Պատճառը միայն հաշիւը չէր: Ես արտասւում էի, քանի որ չգիտէի, թէ ինչ է տեղի ունեցել պրազիլական ֆուտպոլի ուրախութեան հետ:

Հնարաւոր է՝ Օլիմպիական խաղերում կամ Ամերիկայի Գաւաթում մենք յիշեցնենք աշխարհին, թէ ինչպէս է Պրազիլիան խաղում ֆուտպոլ, բայց դա հեշտ չի լինի: Կարծում եմ՝ մենք կորցրել ենք մեր խաղաոճը: Արժենտինան, Չիլին, Էկուադորն այժմ աւելի գեղեցիկ ֆուտպոլ են խաղում, քան Պրազիլիան»,- Պելէի խօսքը մէջբերում է ESPN-ը:

Պրազիլիայի քաղաքական գործիչներից Ժոաօ Սիլվան առաջարկել է Յուլիսի 8-ը դարձնել յիշատակի օր՝ ամէն տարի վերյիշելով Գերմանիայից կրած խայտառակ պարտութիւնը եւ կանխել պրազիլական ֆուտպոլի յետագայ դեգրադացիան:

## ԴԱՒԻԹ ՍԱՖԱՐԵԱՆԸ ՍՏԱՑԱՒ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՈՒՂԵԳԻՐ




«Արայիկ Բաղդադեանի փորձառութեան, հեռատեսութեան շնորհիւ ես ստացայ այս օլիմպիական ուղեգիրը: Ես ինքս չէի սպասում, որ որեւէ մէկը կորակազրկուի եւ օլիմպիական ուղեգիրը բաժին կը հասնի ինձ»:

Այս մասին NEWS.am Sport-ի թղթակցի հետ զրոյցում Կրասնոդարից ասաց ազատ ոճի ըմբշամարտի Հայաստանի հաւաքականի անդամ, աշխարհի նախկին ախոյեան, 65 կգ քաշային Դաւիթ Սաֆարեանը:

Յիշեցնենք, որ Սերբիայում անցկացուած օլիմպիական վարկանիշային մրցաշարի եզրափակիչ հասած, ուղեգիր նուաճած, յետագայում դոպինգի համար որակազրկուած ուկրաինացի Անդրէյ Կվիատկովսկու ուղեգիրը, ըմբշամարտի միջազգային ֆեդերացիայի որոշմամբ, փոխանցուել է Դաւիթ Սաֆարեանին:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՍԿԷ ՄԵՏԱԼ Է ՆՈՒԱՃԵԼ ԽԱԲԱՐՈՎՍԿՈՒՄ



Ռուսաստանի Խաբարովսկ քաղաքում աւարտուել է Կոնստանտին Կորոտկովի անուան միջազգային յուշամրցաշարը, որտեղ Հայաստանը ներկայացնող 91 կգ քաշային բռնցքամարտի Նարեկ Մանասեանը եզրափակիչում առաւելութեան է հասել ռուսաստանցի մրցակցի նկատմամբ եւ նուաճել է ոսկէ մետալ:

Հայ մարզիկը նախկինում տարբեր մրցաշարերում երկու անգամ հանդիպել էր նոյն մրցակցին եւ պարտութիւն էր կրել, սակայն այս անգամ Նարեկը կարողացել է առաւելութեան հասնել, հաղորդում է ՀԲՖ մամուլի ծառայութիւնը:

Հայաստանի միւս ներկայացուցիչները՝ 60 կգ քաշային Կարէն Տօնականեանը, 69 կգ քաշային Գոռ Երիցեանը, 81 կգ քաշայիններ Արսէն Հայրապետեանն ու Արման Յովիկեանը մետալ չեն նուաճել:

Մրցաշարին մասնակցել են 21 երկրի ներկայացուցիչներ:

## ԱՐՏԵՄ ԴԱԼԱՔԵԱՆԸ ՊԱՇՏՊԱՆԵՑ WBA ՏԻՏՂՈՍԸ




Կիեւում տեղի ունեցած պրոֆեսիոնալ բռնցքամարտի թեթեւագոյն քաշային կարգի մենամարտում Ուքրաինայի ներկայացուցիչ Արտեմ Դալաքեանը (13-0, 9 նոկաուտ) պաշտպանել է WBA վարկածով Եւրոպայի ախոյեանի տիտղոսը:

28-ամեայ բռնցքամարտիկը պարտութեան է մատնել աշխարհի ախոյեանի նախկին յաւակնորդ, 38-ամեայ ռումինացի Սիլվիօ Օլտեանուին (16-10-1, 7 նոկաուտ):

6-րդ ռաունդում Օլտեանուն ստացել է ձախ աչքի վնասուածք, արնահոսութիւն եւ մրցավարը դադարեցրել է մենամարտը: Տեխնիկական նոկաուտով յաղթանակը շնորհուել է Արտեմ Դալաքեանին:

**MEHER BABIAN, D.D.S.**
General Dentistry
1111 S. Glendale Avenue
Suite 206
Glendale, CA 91205
Tel: (818) 547-0884
Tel: (818) 547-1476

## ԱՍՏՂԵՐԸ Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ** Մարտ 21-Ապրիլ 19
Կեանքդ քեզի մեծ փորձառութիւններու առջեւ կը դնէ, քեզի կը մնայ զանոնք յաջողցնելը կամ ձախողցնելը: Եթէ իմաստուն ըլլաս՝ անպայման շիտակ ուղին պիտի գտնես: Ճամբորդութիւն մը կը ծրագրես որը քիչ մը դժուար պիտի ըլլայ իրականացնելը:
Բախտաւոր թիւերդ են: 2,15,19,22,29

**ՑՈՒԼ** Ապրիլ 20-Մայիս 20
Դժուար թուող հարցերուդ շուտով լուծում պիտի գտնես, մի մտահոգուիր, որովհետեւ անցեալի փորձառութիւններդ քեզի իմաստութիւն տուած են դիմագրաւելու հարցերը: Ապագայի նկատմամբ միշտ յոյսով լեցուիր եւ պիտի յաջողիս:
Բախտաւոր թիւերդ են: 6,12,20,30,31

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** Մայիս 21-Յունիս 20
Գործատեղիիդ մէջ շատ արդիւնաբեր ես եւ քեզի տրուած պարտականութիւնները լաւագոյն կերպով կ'ամբողջացնես: Լաւագոյն յատկութիւններէդ մէկը, համերաշխութեամբ եւ համագործակցութեամբ աշխատիլդ է:
Բախտաւոր թիւերդ են: 11,24,28,31,33

**ԽԵՑԳԵՏԻՆ** Յունիս 21-Յուլիս 22
Ունեցած շնորհքներդ լաւագոյն ձեւով գործածելու համար՝ պէտք ունիս առաջնորդութեան եւ խրատի: Զանոնք մի մերժեր: Համակարգչային գործերով շատ զբաղուելուդ՝ մարմնիդ ցաւերը կ'աւելնան: Մարմնամարզի հետեւիր:
Բախտաւոր թիւերդ են: 9,17,28,33,35

**ԱՌԻԾ** Յուլիս 23-Օգոստոս 22
Բամբասանքը բացարձակապէս արգիլէ դուն քեզի, մանաւանդ գործատեղիիդ մէջ, հեռու մնացիր անկէ, որովհետեւ ուրիշներու մասին խօսիլը կրնայ կործանարար հետեւանքներ ունենալ: Ամենավատ պայմաններուդ մէջ իսկ՝ յոյսդ մի կտրեր:
Բախտաւոր թիւերդ են: 6,17,21,34,35

**ԿՈՅՍ** Օգոստոս 23-Սեպտեմբեր 22
Շատ յարգալիր եւ կարեկցող հոգի մը ունիս, որու պատճառով շատ սիրուած ես շրջանակիդ մէջ: Պատրաստուէ մեծ հաւաքոյթի մը ներկայ ըլլալու, որու ընթացքին կրնաս ծանօթանալ անուանի մարդոց հետ: Համբերատար եղիր:
Բախտաւոր թիւերդ են: 15,26,28,32,34

**ԿՇԻՌՔ** Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22
Անձնական շահերդ հետապնդելու համար, յաճախ առանց նկատի ունենալու շատ սուղ գին կը վճարես սիրելիներուդ հետ յարաբերութիւնդ քանդելով: Ամէն տեսակի վէճերը փորձէ դադրեցնող եւ խաղաղութիւն հիմնող ըլլալ:
Բախտաւոր թիւերդ են: 1,9,14,16,30

**ԿԱՐԻՃ** Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 22
Ժամանակն է որ յետադարձ ակնարկ մը նետես անցեալիդ եւ փորձես չկրկնել անցեալի նոյն սխալներդ: Իւրայատուկ անձնաւորութիւն մըն ես եւ շրջանակի մէջ փնտռուած: Կողակիցիդ հետ գործակցելով՝ լաւագոյն արդիւնքներու կը հասնիս:
Բախտաւոր թիւերդ են 8,16,25,28,32

**ԱՂԵՂՆԱՒՈՐ** Նոյեմբեր 23-Դեկտեմբեր 21
Օտար մարդոց նկատողութիւններուն մտիկ ընելով դուն քեզ կը նեղես: Բազմազբաղ ըլլալուդ համար՝ ընտանիքէդ հեռու կը մնաս: Դանդաղէ քիչ մը եւ աւելի ժամանակ տրամադրէ սիրած անձերուդ: Հաճելի շաբաթավերջ մը պիտի անցընես:
Բախտաւոր թիւերդ են: 4,11,27,30,34

**ԱՅԾԵՂՋԻՒՐ** Դեկտեմբեր 22-Յունուար 19
Ունեցած ազատութիւնդ չարաչար մի գործածեր, զուսպ եղիր վայելքներուդ մէջ: Կողակիցիդ շատ կը պարտադրես հետեւիլ քու կամքիդ, աւելի լաւ կ'ըլլայ որ քիչ մը ազատ ձգես զինք: Հեռու քաղաքէ մը վատ լուր մը պիտի նեղացնէ քեզ:
Բախտաւոր թիւերդ են: 1,19,24,31,34

**ԾՈՎԱՆՈՅՇ** Յունուար 20-Փետրուար 18
Ժամանակդ կը տրամադրես այլեւայլ ծրագիրներ կազմակերպելու, աւելի լաւ կ'ըլլայ որ առողջութեանդ հոգ տանիս: Լաւագոյն յատկանիշներէդ մէկը նկարագրիդ եզակիութիւնն է, բնաւ մի փոխուիր: Նեղութիւն մը պիտի փարատի եւ պիտի հանգչիս:
Բախտաաւոր թիւերդ են: 5,8,14,23,34

**ՁՈՒԿ** Փետրուար 19-Մարտ 20
Սխալներդ ընդունիլը շատ դժուար է քեզի համար: Կեանքդ մի բաղդատեր ուրիշներու հետ եւ աւելի ուրախ պիտի ըլլաս: Համբերութեամբ գործդ աշխատէ եւ մի հարցադրեր գործատէրդ: Զգաստ եղիր եւ խօսքերդ կշռելով խօսիր:
Բախտաւոր թիւերդ են: 6,15,16,22,29

## ՊՈՅՔՈԹԵՆՔ ԹՐՔԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*Շարունակուած էջ 13-էն*

*ուէն, եւ վերջ:*

*Կոչ կ'ուղղեմ հայ նպարավաճառներուն (Սուփըրմարքէթ թէ թաղային նպարատուներուն), թող սպառեն իրենց թրքական արտադրութեան պահեստները եւ վերջ:*

*Ամերիկահայ թէ հայաստանցի գործարարները կրնան լոլիկի, պիպէրի, չորցած պտուղներու, ձիթապտուղի թէ պանիրի եւ այլ արտադրանքներու հիմնարկութիւններ հաստատել Հայաստանի մէջ եւ հոն թէ գործ ստեղծած կ'ըլլան, թէ օգնած կ'ըլլան Հայաստանի մեր հայրենակիցներուն եւ թէ ալ հարուած մը իջեցուցած կ'ըլլան թրքական տնտեսութեան: Մինչ այդ, եթէ անպայման նմանօրինակ ապրանքներ պիտի ներածեն, Արեւելեան Եւրոպայի երկիրները նոյնքան եւ աւելի բարձր որակով եւ աւելի աժան կրնան ծախել այդ ապրանքները: Յաճախորդներն ալ կը վարժուին նոր ապրանքներուն:*

*Այս առիթով չենք ուզեր անունները հրատարակել Թուրքիայէն մեծաքանակ ապրանք ներածող հայերուն, ոչ ալ այն սուփըրմարքէթներուն եւ նպարատուներուն, որոնք հայու արիւնով ողողուած դաշտագետիններու վրայէն քաղուած պտուղներու հիւթերը կը ծախեն:*

*Մեր նահատակներուն յիշատակը չյարգող վաճառականներու անունները պիտի հրատարակենք, եթէ պէտք ըլլայ:*

*Այս՝ առաջին ազդարարութիւնն է...*

## Մամլոյ Ասուլիս Հայաստանի Հաւաքականի

*Շարունակուած էջ 16-էն*

*մը մէջ -վատ լուրեր, լաւ լուրեր, երկրաշարժ Հիւսիսային թէ Հարաւային Ամերիկաներու մէջ, պատերազմներ Միջին Արեւելքի մէջ, Հայաստան — Մայիս 28ին և Յունիս 1ին մենք առիթ պիտի ունենանք պահ մը հեռանալու այդ բոլորէն և դիտելու, զուարճալի ժամանց ունենալու, միջազգային բարձրորակ մրցումներ վայելելու, և միաժամանակ տօնակատարելու Հայաստանի անկախութիւնը, ինչպէս նաեւ այստեղ, Լոս Անճելըսի սպանական մեծ համայնքի ու հայկական համայնքի փոխգործակցութիւնը աւելի զարգացնելու և իրար աւելի լաւ ճանչնալու»:*

*Մամլոյ ասուլիսի աւարտին, հայկական և սպանական մամուլի ներկայացուցիչներ ուղղեցին հարցումներ հանդիսավար Ֆերնանտօ Փարամոյին, Հիւկօ Պանտիին, Թորոս Բարսեղեանին և Յարութ Մասունեանին, որոնք լրացուցիչ պատասխաններով և տեղեկութիւններով գոհացում տուին եղած հարցումներուն:*

*Ասուլիսին յաջորդեց հիւրասիրութիւն:*

**ՍԱՐԳԻՍ ՄԱՃԱՌԵԱՆ**

## ԼԻՍԱԲՈՆՈՒՄ ՀԱՅԵՐԻ ԳՈՐԾԱԾ

*Շարունակուած էջ 16-էն*

*իւնն ու նրա սէրը ձեռագործ ու հազուագիւտ իրերի հանդէպ: Ցուցահանդէսը միաւորելու է երկու տարբեր ժամանակաշրջաններ. հնաոճ գորգերի կողքին ցուցադրուելու են նաեւ մերօրեայ հայ նկարիչ Մխիթար Կարապետեանի (Mekhitar Garabedian) աւանդարդ գործերը, որոնք հանրահռչակում են հայոց այբուբենը:*

*Ցուցահանդէսի առթիւ դասախօսութիւն է ունենալու ափիւռքահայ գրող եւ պատմաբան Տիգրան Գույումճեանը՝ «Հայերը եւ գորգարուեստը. երեք հազարամեակի աւիւն» վերնագրով:«Գում Գափու» գորգերի ցուցադրութիւնը Պորտուգալիայի մայրաքաղաքում գործելու է մինչեւ Սեպտեմբեր:*

*Պատրաստեց՝ «Արեւելքը»*


# Ն.Ս.Մ.Մ ԱՐՈՒԵՍՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ

### Կը Կազմակերպէ

# ԱՍՄՈՒՆՔԻ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

### Տարիքային Բոլոր Խումբերու Համար

### Ղեկավարութեամբ՝

### Արուեստի Վաստակաւոր Դափնեկիր, Ասմունքող Եւ Հեռուստալրագրող

# ՆՈՒՆԷ ԱՒԵՏԻՍԵԱՆԻ

**Փորձերը տեղի կ'ունենան ՀԿԲՄ-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ 1060 N.Allen Ave. Pasadena .ca 91104**

**Արձանագրութեան Համար Դիմել՝**

**Տիկ. Արմինէ Լաչինեանին Հեռ. 626-372-4662**

**Պր. Յարութ Տէրվիշօղլեանին Հեռ. 323-351-8001**

Մասիս Շաբաթաթերթ

35 ԱՄԵԱԿ

Կազմակերպութեամբ՝ «Մասիս»-ի Օժանդակ Մարմինի

Մասիս Շաբաթաթերթի 35րդ Ամեակի

ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Շաբաթ, 4 Յունիս, 2016

Երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ

ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ

ԼԻՒԴՈՎԻԿԱ ԵՒ ՅԱԿՈԲ ԱՅՆԹԱՊԼԵԱՆ ՍՐԱՀ

117 S. Louise St., Glendale, CA 91205

Երեկոն կը Խանդավառէ

ՎԱՀԷ ՅԱԿՈԲԵԱՆ

եւ իր Նուագախումբը

Տոմսերու համար հեռաձայնել 626•755•4773

Մուտքի Նուէր՝ $75.00


